ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ
(ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ)
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆ № 3 1956

Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆ

ԴԱՎԹԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐ ՏԵՔՍՏԸ

Դավթի քերականական մեկնությունը հայ քերականական մտքի առաջին արտադրանքներից մեկն է։ Այդ մեկնության տեքստը գիտությանը մինչև այժմ հայտնի էր Նիկողայոս Ադոնցի „Дионисий Фракийский и армянские толкователи“ (Петроград, 1915 г.) *աշխատությունից, որտեղ հեղինակը Գրիգոր Մագիստրոսի և Հովհաննես Երզնկացու կոմպիլյացիաների հիման վրա վերականգնել և հրատարակել է հույն քերական Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» գրքի թարգմանության հայերեն 6 մեկնությունները։ Դավթի մեկնությունն զբաղեցնում է Ադոնցի աշխատության 79—124 էջերը և գրված է Թրակացու գործի երկրեղվյան տեքստից անմիջապես հետո։ Ադոնցը այդ մեկնությունը պայմանականորեն կոչել է «Դավթի փիլիսոփայի Մեկնություն քերականին» և իր ընդարձակ առաջաբանում ամենից ավելի երկար կանգ առել նրա վրա։*

Ադոնցի համար վերականգնման հիմք ծառայած կոմպիլյացիաներից առաջինը՝ Գրիգոր Մագիստրոսինը կազմված է 11-րդ դարում և պարունակում է Դավթի, Անանունի, Մովսեսի և Ստեփանոս Սյունեցու մեկնությունները՝ Մագիստրոսի հավելումներով հանդերձ։ Մագիստրոսի աշխատության որոշ թերությունները նկատի առնելով՝ Հովհաննես Երզնկացին 1293 թ. կազմել է նոր կոմպիլյացիա։ Այստեղ նա փորձել է վերացնել Մագիստրոսի կոմպիլյացիայի շարադրանքի անսիստեմայնությունը և օգտագործված աշխատությունները ի մի ձուլել. միաժամանակ ավելացրել է Մագիստրոսին անմատչելի աղբյուրներից քաղած տեղեկություններ և իր կողմից որոշ անհրաժեշտ հավելումներ է կատարել։

Մեկնությունների տեքստերի վերականգնման ուղղությամբ Ադոնցի կատարած աշխատանքը դյուրացել է նրանով, որ օգտագործված կոմպիլյացիաների լուսանցքներում գրված են եղել քաղված հատվածների հեղինակների անունները. դժվարություններ կարող էին ծագել սահմանային տողերի պատկանելիության, այլև բաց թողնված հատվածների վերականգնման հարցերում։ Դավթի քերականական մեկնության տեքստի վերականգնումը, որքանով որ այդ մասին կարելի է դատել նորագյուտ ամբողջական ձեռագիրը տեքստի հիման վրա, կատարված է ընդհանուր առմամբ բավարար։

Դավթի քերականական աշխատության տեքստը պահպանված է ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական ձեռագրատան (Մատենադարանի) №№ 5596, 1115 և 1746 ձեռագրերում։

№ 5596 ձեռագիրը բաղկացած է 345 թերթից՝ 17×13 ֆորմատով. կազմը՝ կաշեպատ տախտակ գրոշմազարդ, նյութը՝ թուղթ, գիրը՝ հին բոլորգիր, վիճակը՝ բավարար։ Գրիչն է Աստվածատուրը։ Գրության ժամանակը ենթադրում են 12—13-րդ դդ.։ Աշխատության գրության և ուղղագրության առանձնահատկությունների մասին կարելի է նշել հետևյալը. բառերը իրարից որոշակի չեն սահմանազատվում, է նշանագիրը բոլոր դեպքերում փոխարինված է ե-ով, բառավերջի յ-ն պահպանվում է առանց հետևողականության, ի-ով վերջացող բառերի հոլովման ժամանակ սովորաբար ւ չի գրվում (տեղոյ, բարոյն և այլն՝ փոխանակ տեղւոյ, բարւոյն և այլն), ն-ից, երբեմն էլ լ-ից հետո խուլերը սովորաբար դառնում են ձայնեղներ (վայելչութիւն, մանգանց և այլն), ս-ն ձայնեղ բաղաձայններից առաջ զ-ի չի փոխվում՝ սկիսբն, սբաւանք և նման բառերում, ձայնեղ բաղաձայնները որոշ դիրքերում դառնում են խուլեր և շնչեղ — խուլեր՝ բաղաւա (փխն. բաղաւդ), աւքտակար (փխն. աւգտակար) և այլն, ուղիղ բառը գրվում է ուղեղ ձևով, սխալ-ը գրվում է սղալ, ասափնան-ն՝ աշտիճան և այլն։ Ձեռագիրը կրոնական-մեկնողական, հայրաբանական-վարքագրական, քերականական, բառարանագրական, փիլիսոփայական, պատմական և այլ նյութերի ժողովածու է՝ սկզբից թերի։ Ձեռագրի սկզբում այլ նյութերի հետ միասին զետեղված են նաև «Պատճառաց գրքի» նյութերը (տեղեկություններ զանազան հին գրքերի գրության պատճառների մասին)՝ կազմված 12—13-րդ դդ.[1]։ Սրանց մեջ տեղեկություններ են տրվում նաև Դավիթ Անհաղթի և նրա գրվածքների մասին։ Այդ տեղեկությունների վերջին մասը զգալի տարբերություններ ունի հրատարակված հատվածներից և նոր լույս է սփռում Դավթի կյանքի որոշ կողմերի վրա։ Այստեղ պատմվում է, թե ինչպես Դավիթը նախ հրաժարվել է հոգևոր կոչումներից՝ քահանայությունից և եպիսկոպոսությունից, ապա մեծ դժվարությամբ զիջել զանազան հորդորանքներին։ Վերջում, հավանաբար Դավթի եպիսկոպոս ձեռնադրվելու պատմությանը ավելի մեծ հեղինակավորություն հաղորդելու նպատակով, ձեռնադրող է համարվում Գրիգոր Նյուսացին (4-րդ դ.), որ, իհարկե, ակնհայտ պատմական անախրոնիզմ է։

Ձեռագրի նյութերի մեջ Դավթի մեկնությունն անմիջապես հետևում է Թրակացու քերականության թարգմանության տեքստին, որն զբաղեցնում է ձեռագրի 112ա—125բ էջերը և կրում է «Յաղագս քերականութեան» վերնագիրը։ Մեկնության հեղինակի անունը ձեռագրում չի պահպանվել. այն վերնագրված է «Մեկնութիւն քերականին» և զետեղված է 126ա—150բ էջերում։ Մեկնության ոչ բոլոր մասերն են վերնագրված. կան միայն «Յաղագս ոլորակաց», «Յաղագս տառի», «Յաղագս վանդի» վերնագրերը։

№ 1115 ձեռագիրը բաղկացած է 225 թերթից՝ 17,1×12 ֆորմատով. կազմը՝ կաշեպատ տախտակ գրոշմազարդ, նյութը՝ թուղթ, գիրը՝ բոլորգիր, վիճակը՝ բավարար։ Գրության ժամանակն է 1409 թ.։ Ձեռագիրը աստվածաբանական-մեկնողական և քերականական նյութերի ժողովածու է. Դավթի քերականական երկը զբաղեցնում է 177բ—195բ էջերը և կրում է «Յաղաքս քերականի» խորագիրը։ Գլուխների սկիզբները նշված են կարմիր թանաքով։

---

[1] Մանրամասները տես Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ, հատ. I։

№ 1746 ձեռագիրը բաղկացած է 277 թերթից՝ 18,7×13 ֆորմատով. կազմը՝ կաշեպատ տախտակ դրոշմազարդ, նյութը՝ թուղթ, գիրը՝ բոլորգիր, վիճակը՝ բավարար։ Գրության ժամանակն է 1280 թ.։ Ձեռագիրը փիլիսոփայական և այլ նյութերի ժողովածու է։ Դավթի քերականական երկը կրում է «Մեկնութիւն քերականի» խորագիրը. գրագեցնում է 173բ—184ա էջերը և վերջից մեծ չափով թերի է։ Գրիչն է Մխիթար գպիրը։

Վերջին երկու ձեռագրերը ուղղագրական աչքի ընկնող յուրահատկություններ չունեն. բառերն անջատ են գրված։

Համեմատական գիտական տեքստի պակասող վերնագրերը լրացրել ենք Թրակացու աշխատության տեքստի և Ադոնցի վերականգնած տեքստի հիման վրա՝ օժտելով միջակ փակագծերով։ Տեքստի մեջ մեր կողմից կատարված համարակալումները և այլ կարգի անհրաժեշտ հավելումները նույնպես նշված են միջակ փակագծերով։ Ձակերտները մերն են։ № 5596 ձեռագիրը նշանակել ենք A-ով, 1115-ը՝ B-ով, 1746-ը՝ C-ով։ Ոչ էական տարբերությունները չենք նշել։

Հրատարակվող տեքստը Ադոնցի վերականգնած տեքստի համեմատությամբ զգալի առավելություններ ունի և հնարավորություն է տալիս պարզելու հայ քերականության պատմության համար կարևոր մի շարք հարցեր։

Դավթի մեկնության նորհայտ ձեռագիրը հնարավորություն է տալիս լրացնել այն հատվածները, որոնք Ադոնցը չէր կարողացել վերականգնել։ Այդպիսի հատվածներից գլխավորները հետևյալներն են. 1) «Յաղագս վերծանության» գլխի՝ դամբանական (ἐλεγεῖον) և խանդաղատական (οἶκτος) ժանրերի վերծանության վերաբերյալ տեղեկությունները. 2) «Յաղագս տառի» գլխի՝ բառերի վերջավորության մասին վերաբերող հատվածը 3) «Յաղագս անուանց» գլխի՝ արական և առաքական հոլովների վերաբերյալ հատվածը, որից երևում է, որ Դավիթը հունական արականի դիմաց ընդունում է հայերենում երկուսը՝ արական և առաքական[1]. 4) «Յաղագս մակբայի» գլխի՝ մակբայների տեսակների վերաբերյալ տեղեկությունները (Ադոնցը կարողացել է վերականգնել միայն առաջին երեք տեսակին վերաբերող մասը)։

Նորահայտ տեքստն ունի բազմաթիվ այլ տարբերություններ ևս, որոնք կարևոր են հայ քերականության պատմության հարցերում Ադոնցի արած որոշ եզրակացությունները հաստատելու կամ ժխտելու տեսակետից։ Առանձնապես հիշատակելի են հետևյալները. 1) տնվան թվի վերաբերյալ մասը, որտեղ Դավիթը նշում է հայերենում երկակի թվի բացակայությունը. եթե Դավիթը և Թրակացու քերականության թարգմանիչը նույնն են, ապա հաստատվում է մեր այն կարծիքը, որ հունարենի երկակի թվին վերաբերող հատվածի թարգմանությունը լոկ թարգմանչի բարեխղճության արդյունք է և որ թարգմանիչը գրան հայերենում նորմավո-

[1] Ավելի մանրամասն տես մեր «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (11—15-րդ դդ.)» աշխատությունը, որը գրվելիս այս ձեռագիրը ձեռքի տակ չենք ունեցել և հենվել ենք Ադոնցի՝ տպագրված տարբերակի վրա, որի՝ Դավթի մեկնությանը պատկանելը հաստատվում է նորահայտ ձեռագրով։

բիչ արժեք չի հատկացրել. 2) բայի լծորդությունների վերաբերյալ մասը, որը ցույց է տալիս Դավթի՝ Թրակացու թարգմանչի նման լծորդությունների 8 խումբ ընդունելը. եթե սա մի կողմից ապացույց է Դավթի և Թրակացու քերականության թարգմանչի նույնության (հակառակ Ագոնցի կարծիքի), մյուս կողմից հաստատում է Ագոնցի այն եզրակացությունը, որ լծորդությունների թիվը հասցվել է 10-ի ավելի ուշ՝ մինչև Համամը. 3) հոդի վերաբերյալ մասը, որից բացահայտ է դառնում, որ Դավիթը ժխտում է հայերենում հոդի՝ իբրև առանձին խոսքի մասի գոյությունը՝ տարբերություն Ագոնցի վերականգնած տեքստի՝ նորահայտ տեքստում բացակայում են դանդաղն մանրամասն բացատրությունները, որոնք, այսպիսով, Դավթին չեն պատկանում. տակա է միայն այն մասը, որտեղ Դավիթը նշում է, որ թարգմանության մեջ հոդի վերաբերյալ հատվածը դրված է միայն լրիվության համար («վասն զտեղիդ ընդոյ»). 4) դերանվան մասը, որտեղ Դավիթը դերանունները որպես ամենաընդհանուր բառեր համեմատում է մարդ բառի հետ, որը իբրև անուն տրվում է բոլոր մարդկանց ընդհանրապես. միաժամանակ այստեղ ավելի պարզ կերպով Դավիթը հայերենին հատկացնում է 6 հոլով՝ նշելով, որ դերանվան հոլովման մեջ այդ ավելի ստույգ է երևում. սրանով է՛լ ավելի է հերքվում Ագոնցի կարծիքը հայերեն տեքստում ավելացված 6-րդ հոլովի՝ լոկ կրկնագրություն լինելու մասին[1]:

Ագոնցի հրատարակած տեքստի և նորագյուտ ձեռագրի միջև կան բազմաթիվ այլ տարբերություններ ևս, որոնք ավելորդ ենք համարում մանրամասն քննել և որոնք ավելի անհրաժեշտ են դարձնում Դավթի մեկնության նորահայտ տեքստի հրատարակությունը:

Դավթի մեկնությունը պարունակում է հայ լեզվաբանության, արվեստի և փիլիսոփայության պատմության համար կարևոր նյութեր:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ[1] ՔԵՐԱԿԱՆԻՆ

Յերկուց իմն պատճառաց մարդոյս գոյացեալ հատատեցաւ[2] բնութիւն՝ յոգւոյ և ի մարմնոյ, և սոցա արուեստս որոշեալ առանձինն ըստ ինքեանց, ոգւոյն՝ բանականն և մարմնոյն՝ գործնականն, բայց հաւասարութեամբ առ միմեանս կապակցեալք, մինն՝ մտածաւբէն առաջնորդելով և միւսն[3]՝ զնոյն գործովք կատարելով[4]: Եւ ձևք երկոցունց ըստ երից որոշմանց՝ բարւոյ և չարի և միջակի: Բանականին, որ է բարի՝ գիրք ինչ և կամ երգք[5] հոգևորք, չարին՝ թովչութիւնք և կախարդութիւնք[6], միջակին՝ մրմունջք և նմանք[7] նոցին: Իսկ գործականին՝ աւգտակարք յարհեստից՝ հիւսնութիւն և դարբնութիւն[8] և նմանք սոցին[9], և չարին՝ գեղ մահաբերք և գործիք, իսկ միջակին՝ աղեղնաւորութիւնք և գեղապարելն[10],

---

[1] Դավթի մեկնության վերաբերյալ մանրամասնությունները մես մեր վերևում հիշատակված աշխատության մեջ:

Տարբերվածներ.— [1] B Յաղաքս. [2] A հատատեցաւ. [3] C մինն. [4] B գործելով և կատարելով, C գործով կատարելով. [5] BC երգ. [6] C թովչութիւն և կախարդութիւն. [7] C նմանողք. [8] A հիւսնութիւնք և դարբնութիւն, C հիւսնութիւնք և դարբնութիւնք. [9] C իւր. [10] C մեղադրեալն:

Եւ թողով արուեստաւորիս[1] զչարին և զմիջակին խնդիր՝ վերաբերէ զբարւոյն։ Եւ քանզի արուեստիցն ոմն է կայուն և ոմն անցական, ոմն հաստատակաց և ոմն առանձինն, բանականիս կայուն և[2] հաստատակաց՝ դիրք և անցական[3]՝ մրմունջք և իւր մտածութիւնք[4], իսկ գործականին հաստատակաց և կայուն բերդք և հանեալ ջուրք. անցական և առանձին գուղնաքեայ[5] գործք։

Բայց հարցեալ[6] ուրուք զսահման արուեստիս. զոր աւրինակ, եթէ ասասցէ՝ «զի՞նչ է մարդ», լիով պատասխանեալ ասի՝ «կենդանի բանաւոր մահկանացու». կենդանեաւն՝ ընդ ընտ կենդանիս[7] դասեցաւ, բանականաւն՝ ընդ վերին զաւրութիւնսն և մահկանացուաւն անջատեցաւ[8] ի վերնոցն։ Ապա թէ ոչ այսպէս, ոգիտանայ[9]։

Նոյնպէս գիտութեամբ[10] այնմ թէ՝ «արուեստ է բաղկացութիւն[11] ի թողմանէ նախակրթեալ[12] առ ի պիտանացու ինչ իրս որ ի կենցաղումս»։ Բաղկացութիւն՝ իբր թէ ի բազմաց միացեալ ըստ առակի[13] ոստայնանգութեան, վասնզի ոմն ասի գոող բայի և ոմն անուան, միւս այլում[14] մասին ուստի բաղկացաւ արուեստ։ Իսկ ի թողմանէ նախակրթեալ[15]՝ որպիսի ինչ, զի զոր ինչ եգիտ ոք[16] կրթելով և յայլմէն ևս միացելով[17] զկնի իւր եթող ապագայիցն։ Իսկ պիտանացուն՝ զի բոլոր ինչ ի կենցաղումս արհեստիս առաջացեալ[18] ունի զտեղի։

Արդ հարկաւորաբար բանական արհեստիս առաջարկութիւն հնգիւքս այսոքիւք[19] կատարի՝ գիտաւորութեամբ, հարադատութեամբ, վերագրաւն վարդապետաւն և ըստ մասին բարժանմամբ, յորում և[20] աւգտակարն։

Գիտաւորութեամբ՝ մտածաւէն[21] իմն ըստ անաշինութեան առակի և միանգամայն առաջատես խոհականութեան[22]։

Իսկ հարազատութիւն՝ ոչ աւտարս ինչ և այլեայլս, քան եթէ համբոյրս և հարազատս զատացուածն[23] առնել։

Այլ վերագիրն՝ զի բաւական լցէ միով նկարագրիւն զամենայն գրոյն գիտել զմիտս, որպէս ի Քերականութենէն կամ ի Գործոց առաքելոցն է յայտ։

Բայց վարդապետականն՝ յերկուս իմն ունի ձևս, որ է կատարելոց գործ կամ զգոյացութենէ բուռն հարկանել և իջանել ընդ արարածս աւրինակ իմն ընդ աշտիճան յանհատս տեսակն, և կամ ասուի դարձեալ անդրէն[3] ելանել։

Սոյնգունակ և ըստ մասին[25] կատարումն՝ թէպէտ ի քերականութենէ սկիզբն առնելով առաջնորդէ մինչև ի վերջին մասանն և կամ ի վերջէ մասանէ մինչև ի գլխաւորագոյն սկիզբն, յորում ըստ առաւել քաջայայտութեան և ծանաւթ կացուցանելոյ զառաջարկեալսն[26] լսաւղաց ընտանեննայ և աւգտակարն։

Տարբերցվածներ. — 1 C աշուեստաւորին. 2 B է. 3 A անցականին, C անցականք. 4 AB մտածութիւնք ինչ. 5 B գուղնաքեայք. 6 B ի հարցման. 7 A կենդանիս. 8 B զատեաւ, C զատաւ. 9 C ոգէտ է նա. 10 B ոգիտութեամբ. 11 B բաղկացութիւնք. 12 C նախակրթիլ. 13 C անկի. 14 AB այլ ոմն, 15 AB նախակրթութեան. 16 B ինչ է գիտոյք. 17 A յայլ ամէն ևս միացելով, B չիք, C յայլմէն ևս միացեալ աւք. 18 A առաջագայեալ. 19 A այսուսիկ. 20 B յորում և, C յորում և է. 21 B մտածաբար. 22 C խոհեմականութեան. 23 A զատացուածն. 24 AC անդէն. 25 B ատ ասի. 26 A զառաջ երթարկեալսն, C զառակ արկեալսն։

Արդ գիտելի է և այն, զի բարժանի բանական արուեստս ի չորս[1] յիմաստ[ասիր]ութիւն[2], ի բանական բժշկութիւն, ի քերդողութիւն և ի ճարտասանութիւն: Եւ իւրաքանչիւր ոք ի սոցանէ յանգութիւն ունի առ իրեարս՝ իմաստասէրն և բանական բժիշկն, ոմն[3] քննէ զերկնի և զերկրի բնութիւն և ոմն զմարդոյն, իսկ քերականութիւն և ճարտասանութիւն, զի քերդութեան արուեստն պիտոյանայ[4] ճարտասանականին[5] պայծառ բանից[6], որք և հաւասարապէս վարին առաստղելաւք և խրատուք[7], իսկ ճարտասանականն՝ ի նմանէ կիթից և ոլորակաց և այլոց ի նոսա գիւտից[8]:

Բայց սկիզբն առեալ քերդողականիս յերաժշտականէ անտի, վասնզի զնա բնաւորեցաւ երկայնիւք և սգիւք յիւրն վարել նուագաւոր երգս. և ապա բազմաց մարդկան ի մէջ առեալ զքերթողականն[9], վասն որոյ մեզ այժմ խնդիրս է ըստ իւրաքանչիւրն կարգաց: Ոմանց ի ձայնէ սկիզբն առնելով, իբր ձայնս է նիւթ բանականութեան. որպէս հիւանականին՝ վայս և դարբնականին՝ երկաթ, այլև վայելչութիւն և կարգ աշխարհի ձայնիւ[10] ասացեալ յարմարին, և հաստատեալ[11] յայս բանիւ վարդապետէին[12] և[13] աշակերտելքն կրթէին[14]: Եւ ասացին զձայն վիրաւորութիւն ազգոյ, աւրինակաւ զխիստ ինչ[15] ընդ իրարս բախելով, զի վիրաւորեալ զաւգն ի միջոցին ասցէ զձայն. իսկ անգայտն և կակուղն ոչ նոյնպես[16] ասցէ[17] զձայնին[18] հնչումն: Բայց այլոց պախարակելով զայն, թէ ըստ արուեստաւորին անցանել, բառնի և արուեստն, սկիզբն արարին ի գրոյ, որպես զի յառաջիկայն[19] յիշատակ[20] յերկարաձգեսցի:

Իսկ ապա Դիոնեսիոս ոմն անուն եկեալ ըստգտանելով զերկոցունց սկզբմունս այսպես, թէ՝ զձայնի բնութիւն գտանել իմաստասիրաց է, և գիրն տեսցի ի կարգի իւրում, զի մի այլ ընդ այլոյ քննութեամբ ծաղր լիցի արուեստաւորն. և իւր սկսեալ բուռն եռար զնոյն[21] ինքն զերէս, եթէ «քերականութիւն է հմտութիւն»:

Զկնի որոյ Հերովդիանոս ոմն, որդի Ապողինարի, խոհեմագոյն միանդամայն և իշխան, որոյ վասն յոյժ անբաւութեան արուեստից զբոլորից այրելով զգրեանս[22]՝ զնաւրն իւր միայն եթող, ոմանք ասեն վասն յիշատակի և այլք՝ վասն առաւել մտաւորութեան, բայց փոքր ինչ և այս արուեստս կամ վասն չանկանելոյ[23] ի բուռն և կամ վասն մանկանց կրթութեան[24] մնացեալ ի Դիոնիսէ ասացելոցն:

Առ որովք նախքան սոյն արուեստս մտանել գիտելի է և զամբարեալսն ի սմին շահան, քանզի կէտք և ոլորակք, հոլովք անուանց[25] և խոնարհմունք բայի և ստուգաբանել և այլ սոյնպիսիք ոչ ուստեք որպես ի սմանէ հմտանալի[26] լինին:

[ա. ՅԱՂԱԳՍ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ]

Եւ արդ քանզի նախակարգեաց սկիզբն արուեստիս ի[27] հմտութենէ, թուեցաւ ոմանց յանբանութիւն արկանել փոխանակ առաւել գիտութեան:

Տարբերցվածներ. — [1] A բանական արուեստս ի Դ, B բանական արուեստ ի չորս. [2] ABC իմաստութիւն. [3] AB որ. [4] BC պիտոյ է. [5] AB ճարտասանին. [6] A բայից, C բառից. [7] AC խրատուք. [8] AB աւգտից. [9] A քերականն. [10] A ձայնիս. [11] B հաստատելոյ. C հաստատելով. [12] B վարդապետականքն, C վարդապետին. [13] B չիք. [14] C կրթին. [15] B չիք. [16] B նոյն. [17] C տան. [18] C չիք. [19] AB յառաջակայսն. [20] AB յիշատակացն. [21] C չիք. [22] C զգրեանն. [23] A չանկանելով. [24] BC մանկակրթութեան. [25] C անուան. [26] A հմտանալի. [27] BC զի:

Այլ նա ճշմարիտ զոր ինչ եդիան և կարգեաց ի հմտութենէ և ի բանաւորութենէ։

Եւ հմտութիւն այսպիսի ինչ. հարցեալ ցքեզ[1] բայ կամ անուն և ոչ կարացեալ ըստ արժանոյն պատասխանեալ ի նախնեացն անկար սովորութիւն՝ ըստ նմանութեան երթալոյ անասնոց[2] ի սովորական տեղիսն։ Իսկ զբանաւորութեամբ լուծանել զինդիրն՝ ըստ նշանաւոր հրամանաց ի լսելոյ մարդոյ ստուգելով զբաղում անգամ ասացեալն քերդողաց և շարագրաց[3], այլ ոչ զաւտար ինչ, որ ոչ լսի բան։

Բայց ասելով մասունս վեց՝ եցոյց քերդողականս, որք հատեալ ի բոլորէ. և եթէ զմի ոչ կալցի յայսցանէ քերդողն, ոչ ասի կատարեալ արուեստաւոր։ Իսկ տեսակք ասին ճարտասանականին[4]՝ ատենական, բաղխական և կացրդական, զուգահաւասարք հատեալք[5] ի սեռէ. և զնոյն ինքն բերելով ի յինքեան, որպէս զկենդանութիւն կենդանին, յորոց թէ ունիցի զմի ի նոցանէն, կատարեալ ասի ճարտասան։

Ըստ որմէ[6] և զայն գիտելի է, զի նախադասութիւն ըստ երից լինի յեղանակաց՝ ըստ տեղոյ, ըստ ժամանակի, ըստ պատուոյ։ Իսկ վերծանութիւնս, որ ասի ընթերցումն ըստ առոգանութեան, նախադասեցաւ ըստ տեղոյ, քանզի անկար է առանց սորա այլոց առաջիկայիցն զյարմարութիւն ունել։ Այլ իմաստասէրք ասացին և զվերստին մոռացումն իմաստից՝ աւրինակաւ գիւտիւ[7] ծառային։

Եւ զրուցատրութիւնս առնելի[8] է ոչ ըստ սովորական ինչ խաւսից, այլ կամ զքերդողացն արարուածս կամ զիւրաքանչիւր ուրուք նոցունց գաղափարաւք[9] ձևացուցանելով զրուցել։

Նա և հարկաւորութիւն է վարդապետին ոչ զաւտար ինչ, այլ զիւրոյ լեզուին խաւսս[10] և զպատմութիւնս ինչ նախնեացն արարեալ լաւագոյնսն համառաւտապէս[11] գիտել, զի իբր հարցանիցի[12], գիւրաւ լուիցի[13]։

Բայց ստուգ[արան]ութեան ձևք են երեք՝ յիրէն, յարուեստէ, ի ձայնէ. և յարացոյց առաջուն՝ սափոր և երկրորդին՝ փայտատ և երրորդին ճնճղուկ։ Բայց ոչ ամենեցուն է գիւտս այս, քան եթէ խոհեմագունիցն գիտութեամբ։

Իսկ համեմատութիւն ունին[14] առ իրեարս բայ առ բայ, անուն առ անուն. և եթէ ասասցի ստեղծուածոց[15] և կազմուածոց, և բերցին անուանք հանգոյն նոցին, և առաւելն տանի զհաստատութիւնն. նոյնպէս և բային՝ ողորմեայն քան զողորմեացն[16]։

Այլ մեծի քերդողութեան[17] արուեստն թէպէտ ի վերջէ դասեցաւ, դատողականս է մասն, զի սովորութիւն է բանաւոր արուեստաւորի[18] յառաջադասել զառաւելն, որպէս զվերծանութիւն, զի զարթուցէ[19] զլսաւղն, և զկնի զաւրեն դատողականիս, զի համ թողցէ յասացուածն[20]։ Եւ են հանգամանք դատողականիս այս. քանզի հերձուածողացն ընդունայնաբանու-

Տարբերցվածներ. — [1] AC զքեզ. [2] անասնոյ. [3] C շարագրածաց. [4] AB ճարտասանին. [5] C հատատեալք. [6] B ըստ որում է, C ըստ որում. [7] AB գիտիւ. [8] A ունելի. [9] AB գաղափարաց. [10] AB խաւսն. [11] AB համառոտապոյնս[ն]. [12] AB հարցանիցէ. [13] AB լուիցէ, C լինիցի. [14] A չիք. [15] C ըստ ստեղծուածոց. [16] A ողորմեայն քաջողորմեայն, C ողորմեացն քան զողորմեայն. [17] B քերդողականութեան. [18] A արուեստի. [19] A զարթուցանէ. [20] C զասացուածն։

թիւնս լուծանելոյ, որք ուղղափառութեանց[1] անուամբ կամեցան զիւրեանցն արդարացուցանել զվրիպանս, ի սուտիւ քննութենէն դատելոյն[2] յանդիմանի աւտարոտի խառնուածն։

[Բ. ՑԱՂԱԳՍ ՎԵՐԾԱՆՈՒԹՑԱՆ]

Արդ զինչ է վերծանութիւն ըստ մեզ և կամ որպէս ըստ իմաստնասիրացն, քաջայայտ է։ Բայց զարմանալ գոյ ընդ արուեստաւորիս[3], զի յառաջ ասաց զսոցուն[4] մասունս, մինչև տարեալ հասուցանէ յանհատն, ուստի առաւելապէս[5] շահիցն մատակարարիցի աւգուտն։

Եւ զի՞ նախակարգէ զվերծանողութիւն քերդողաց և ապա շարագրաց. նախ՝ զի ամենայն արուեստաւոր զիւրն կամի յարգուն ցուցանել[6], երկրորդ՝ զի նախադուռն[7] իսկ[8] և սկիզբն բանական արուեստիս զիւրեանցն առեն[9] լինել քերդողքն։

Ըստ որում ապա զենթադրութիւնն[10] իմանալ է[11] նմանութիւն ներքոյ կայ[12] դիմաց ձևով[13] և ձայնիւ նմանապէս, որ[14] գործէ ընթերցողին ըստ քաջութեան հանդիսի[15], ի յանդգնութենէ և յերկչոտութենէ խոյս տալ և միայն միջակին սպասելով՝ յորժամ խրոխտական գայցէ բան, և ձևն ըստ այնմ ընթեռնուլ. և եթէ խանդաղատական՝ ըստ այնմ, զի և իւր[16] և վասն որոյ բանն է, արութիւն ծանիցի։

Նա և ըստ առոգանութեանցն, թե ուղիղ վերծանիցի[17], որպէսի Պաւղոս[18] և զայլսն մի ըստ միոջէ զիւր արուեստն եցոյց լսողին. ապա թէ ոչ նա որպէս էր լուաւ, այլև ինքն ծաղր եղև[19]։

Իսկ ոչ ուղեղ արտոնել[20]՝ ըստ աւրինակի չար[21] խոհակերի զանդամսն ոչ ուղիղ բարժանել[22], որ է զմիսս ի մատաց և զբան ի բանէ զատուցանել, զի մի պարունակեալն ի նմա միտք յայտնեսցին, և ի լսողէն զանխղաց-ցոյց և ինքն անարուեստ ցուցաւ։

Մինչև ցայս վայր ասացուածս[23] հասարակաբար պիտանացու բոլոր բանական արուեստաւորաց. իսկ յայսմհետէ զիւրեանցն ձեռնարկութիւն ի մէջ առեալ քերդողացն։

Վասնզի ողբերգութիւնն ի հայումս է[24], իսկ ըստ հոռոմին թարգմանութեան նոխազերգութիւն ասի առ ի պաշտաւն առնել Դիոնեսեայ ումեմն տուողի որթոյ, որ է պատմութիւն յայտնի։ Եւ է ողբերգութիւնդ ոչ աշխարհական, քան թէ արարուած քերդողական զքաջացն գործեալ[25] իրս, զոր պատմեալ է անաւորապէս՝ հանդոյն գործեցելոցն գերազանցութեամբ, ամենայնիւ դիւցազնաբար և ոչ կաղս ի կաղս[26] և քամտելիս։

Իսկ կատակերգութիւնք[27], որ են[28] արարուածք[29] քերդողացն ոմանց յանդիմանութիւն և [ոմանց] յաւժարութիւն, որ է[30] խրատս բազում ունի յինքեան. աշխարհաւրէնն՝ զի ամենեցուն յայտնի լինիցի։

Տարբերցվածներ — [1] A ուղղափառաց. [2] C դատելոցն. [3] C արուեստաւորս. [4] A սոցունց, C սոքուն. [5] B առաւել այսպէս. [6] C յարգեցուցանել. [7] C նախադրաւն. [8] C չիք. [9] AB չիք. [10] AC զենթադրութիւն. [11] AB է իմանալ. [12] C քերական. [13] A ձևոց. [14] C ուր. [15] AB հանդիսի. [16] C զի այն անդի և էր. [17] C վերծանեսցի. [18] C Պաղոս և ոչ Սաւղոս. [19] C եկաց. [20] A արտոնելով. [21] C եղար. [22] C յաւշել. [23] AB արարուածս. [24] C չիք. [25] C գործեցեալ. [26] C կաղս ի կաղս ինչ. [27] C զկատակերգութիւն. [28] C որ և նա. [29] A արարուած. [30] BA չիք։

Եւ դամբանականն է գերեզմանական, որպէս թէ անհեղեղս ձեռով և ձայնիւ յանկարծագէպ ինչ հասանել ազոյ լալումն, ըստ որում և ի վերծանելն է վարել հմտարար[1] նմանութեամբն։

Իսկ քաջորդեալի տաղ ասի հոմերականն[2], յորժամ յարմար[3] բառիւք և ոլորակաւք ի սկսմանէ մինչև յաւարտումն[4] զմիտսն աւարտեալ բերիցէ և զչափս։ Բայց ասի և բոլորակ տաղ[5], յորժամ առաջարկութիւն մասցն երկարագոյն իցէ, երկրորդ տաղին[6] սկիզբն ի բաղաձայնից և կամ ի կրկնակէ հաւիցի[7], զի զանգայտն[8] և զմեծասարն գործիցէ երկայն. իսկ մեծավերջ վասն երկայնութեան ձայնին սահմանեցաւ ողբերգակացն։

Այլ քնարական քերդուածինն[9], որ է մասն իմաստասիրացն ըստ ասահեղաբաշխութեան[10], ըստ երկրաչափականի ունի հանգամանս ըստ թուականին, զի զգաշնակումն ձայնին զոտինն և զազիոյն[11] ի ներքոյ իրսն համանման և ոչ աւտարատի[12] ինչ բերիցէ։

Իսկ խանդաղատականն կամ առ սիրելիս երևի և ծնողաց՝ առ մանկունս և այսպէս[13] ըստ նմին, եթէ նոյնպիսի[14] տեղի ինչ դիպեսցի[15] յընթեռնուլն[16]։

Արդ որ ըստ ասացեալ առոգանութեանց, եթէ մի ըստ միոջէ այլոց ձևոցն ոչ պահեսցէ[17] զխառութիւնն, զարիապէս քերդողացն զշարագրութիւն և զքան տապալէ և զիւր ունակութեան արուեստն ի վերծանելն ծիծաղելի երևեցուցանէ[18]։

[գ.] ՑԱՂԱԴՍ ՈԼՈՐԱԿԱՑ

Բացագանչութիւն յոլորակի սեռ իմանի, քանզի հաւասարապէս անշնչիցն և շնչաւորացն և բանաւորացն է, իսկ ոլորակ՝ միայն բանականիս՝ առ ի պատկանաւոր ունելոյ ձայն և ոմանց ծանաւթ լեալ առ ի կրթութենէ, որպէս ի յունական լեզուին. իսկ այլ ազգաց ոչ ևս։

Եւ թերևս տարակուսեսցի ոք[19], թէ շնչոտ վերացման տղագաւ ասի ոլորակ, իսկ բութն ընդէ՞ր. այնու զի[20] որպէս նա ի վեր հանէ, սա ի խոնարհ նմանապէս իջուցանելով[21] հարթէ, ոչք ի մի տեղ եկեալ բազկացուցանեն զպարոյկն. ըստ առակի՝ ծայրիցն՝ ի սպիտակէն և ի սևոյն գոշն. իսկ ընդ ման և ընդ կեանս ոչ է միջոց։

[դ. ՑԱՂԱԴՍ ԿԻՏԻ]

Նախադասելով սորա զոլորակն, քան զկէտն, ոչ ըստ պատուականութեան, քան եթէ ըստ տեղոյ, քանզի հարկաւոր է յառացուածին նախ ոլորակին և ապա կիտին ունել զկարգն։

Իսկ զի՞ ասաց զիւրաքանչիւր ոք ի կիտիցն յառաջագոյն արհեստիւն. նախ՝ զի սահմանաւ զիւրաքանչիւրոցն ընութիւն ծանուցէ, երկրորդ՝ զի տեղեաւն և ձայնիւ զաւարտել կէտն իբրև զթագաւոր, իսկ զերկուսն իբրև զսպասաւորս նորին[22], աւրինակ իմն զպակասեալն և զառաւելեալն այնոքիւք կոչել[23] ունակութիւնք[24], իսկ չափաւորն[25] պարզաբար։

Տարբերցվածներ. — [1] B հմտարան. [2] A ոմերական. [3] A երկար, B յերկար [4] C յանկումն. [5] C ոլորակաւդ. [6] C աւդին. [7] C հաւիցէ. [8] B զանդէտն. [9] C երդութիւն. [10] C ասահեղադիտութեան. [11] BC ազոյն. [12] A աւտար, B աւտարատի, C աւտարատիս ինչ. [13] A այս. [14] A նոյնպէս ի. [15] B դիպիցի, C հանդիպի. [16] AB չիք. [17] BC պահիցէ. [18] AB յարիացուցանէ. [19] AB չիք. [20] AB այս է զի. [21] AB զիջուցանելով. [22] AB չիք. [23] C չիք. [24] C նշանակութեամբ. [25] A չափաւոր է։

Եւ են հանգամանք ընակիտիս մի ըստ բացարձակ ձայնի որպէս «ոչ շունք»[1] և որ ի կարգին է. և միւս՝ յորժամ ի միջակիտին[2] հանգիստ առնուցու, երթեալ ի ստորակէան, ուստի պատրաստարար ի կէան ելանիցէ ըստ առակի ճանապարհորդութեանն[3]։ Եւ ստորակիտիս է և[4] այս՝ ունել զբացարձակն և սմա որպիսի՝ «ոչ ապաքէն առաքեալ եմ», երկրորդ[5] յորժամ պատասխանուցոյ ինչ կարաւտանայ բանն, ըստ այնմ՝ «ինձ պիտոյ է ի քէն մկրտիլ և դու առ իս գաս»։

[Ե. ՑԱՂԱԳՍ ՀԱԳՆԵՐԳՈՒԹԵԱՆ]

Յետ որոյ զհագներգութիւնն ասելի է, զի ոչ եթէ ի հարկաւորացն է մասանց արուեստիս[6] որպէս և այլքն, այլ առ կրթութիւն մանկանց։

Եւ հագներգութիւն ըստ հոռոմին[7] ասի[8] գաւազաներ գութիւն, վասնզի սարգենի գաւազանաւ, զոր փոխանակ սուգելոյ կուսին, որպէս ասեն երկիր բուսոյց, պար գոլով[9] Ապողոնի երգին[10] զհոմերական քերթածոն, վասն խնդրելոյ շնորհին որ ի Հոմերին է առացեալ քերդածացն, որ զանխլացեալ վասն միայարութեան[11], բարժանումն գործեցաւ յաղագս դիւրաւ ուսման մանկանց յերկուս գիրս յեղիական և յՈդիսական[12] ի քսան և չորս ճառսն. քանզի մանկանց է խրոխտելն և սրամտելն ոչ[13] բարիւք, այլ զբարիւք[14] նախանձ և զբանական ունել հզաւր զաւրութիւն խորհրդոյն, վասն այնորիկ բարժանմամբ ճառիցն, զի բժշկեսցին միտքն առ ի յամբողջ պատասխանելոյ առ ի յարցուածս[15] յորում է ճառին և մի վհատեալ պախեսցէ[16] անգիտանալովն ի քաղցր շահէ[17] ուսումնասիրութեան[18]։

[Զ.] ՑԱՂԱԳՍ ՏԱՌԻ

Արդ և յայսմ սկիսբն արարեալ արուեստաւորիս[19] վարդապետութեան քննեաց զմասունս և զմասանց մասունս. իսկ այժմ բուռն հարեալ զնիւթոյն զի առ փոքր փոքր ելցէ[20] ի վերին կատարելագոյնն[21]։

Եւ զի՞ ասէ յաղագս տառի և բուռն հարկանէ զգրոյ. քանզի տառդ անմարմին իբր թե բանի նշանակ, զի գիտելի կացուցանէ զգրովն զբանն, որպէս զայրիւն զայրն. իսկ նախադասեալ տառիս աւրինակ իմն ըստ պատուոյ, իբր ոգին քան զմարմին լաւագոյն[22]։

Բայց բաղմութիւն գրոյս, մի՝ զի անարուեստ խաւսք և բարբարիկոն լիցու, և երկրորդ՝ վասն թաւութեան[23] զսոյն կարգել ի գիրն որք ըստ խաւսիցն յարմարին։

Եւ գիրդ ի քերելոյ և ի գծելոյ ըստ հաստատուն յարացուցի և Հոմերոնէ կոչի հարկանելով նեռիւ զդարշապարդ Դիոմեդեայ Պարիսի[24]։

Եւ զի՞ ասաց կրկնարանելով զտառս. ցուցանէ զարբուն և զմիաբանութիւն գրոյ և ձայնի հանդոյն տարերցդ[25] ընդ երկրի և ընդ կենդանիս

Տարբերցվածներ. — [1] C շունչ. [2] C ի միջին կիսին. [3] C հանապարհորդին. C չիք. [5] AB երրորդ. [6] AB արուեստաւորիս. [7] B հոգոյ մին. [8] AB լսի. [9] C պարգեալով. [10] ABC երգել. [11] C միոյ արուեստի արութեան. [12] AB յեղիական և յՈդիսական. [13] BC չիք. [14] BC ոչ բարիւք. [15] C յարցուածս ասել. [16] B պահեսցէ. [17] C անգիտանալովն ի քաղցր շահէ՝ չիք. [18] C ուսումնասիրութեամբն. [19] B արուեստիս. [20] C եկեսցէ. [21] C աւգնականութիւնն. [22] C լաւագոյնից. [23] A թաղաւորութեան. [24] A չիք, BC Դիոմեդեայ (C դիոմեդեայ) ասպարիսին. [25] B տարերացդ, C տարերց։

միայարութեան[1]. և դասութիւն[2]՝ զի երբեմն յար ասի և երբեմն այր, միոյն յին և միոյն այրն դասելով։

Եւ ապա որոշելով զձայնաւորսն ի բաղաձայնեցն իբր պատուականս[3] և պատճառս ձայնի յարմարման, զի և ըստ ինքեանց և ըստ զայլսն խառնելոյ բաւականանան[4] հնչումն և բան յաւգաւոր[5] պատկանել[6]։

Եւ այնուհետև կամեցեալ զանազանել և զայլսն, ի ձայնաւոր որոշմունսն[7] այսր[8] զատանէ զէն և զովն՝ զբնութեամբ երկարսն, յորս թէ՛ և[9] խառնի և թէ՛[10] ոչ ձայնորդն, ոչ երբեք անփոփոխն զիւրեանցն ձայնս[11]։ Եւ զոյն և զեյ և զնիւն բնութեամբ սուղ եցոյց, որք ոչ երբեք թոզուն զիւրեանց չափն։ Եւ միջակս զատուցեալ սորա զերկամանակսն՝ զայր և զեր և զին, որք ի ձգելն երկարիցն հաւասարք և յանփոփոխանն՝ ոգիցն, որպէս ասն և ասն։ Բայց ոմանց հակառակել դեպ եղև ասել եռամանակս, իսկ ոչ կարաւ զտեղի, վասնզի ոչ համանգամայն երեքին[12] ոմանա[կ]քն ասին, այլ երբեմն մի և երբեմն երկուս[13]։

Իսկ առաջադիրքն ոչ առ բաղաձայնսն են, քան եթէ առ ձայնաւորսն քանզի այլ ձայնաւորքն կարեն ինիդ և ճիւնիդ առաջադիր լինել, իսկ սոքա ոչ են։

Նոյնպէս և ինդ ճիւնիդ[14] կարէ լինել ըստ ցուցելում աւրինակիդ։

Նա և երկրաբարբառք երկու ձայնաւորաւք ի մի ասեն լեալք, երկու նշանակս ձայնի ցուցանեն։

Ըստ որում գիտելի է և զբաղաձայնիցն հանգամանս, քանզի աւրինակ իմն դիցի առաջի. միտք մարդոյ՝ տաւն և զգայութիւնք՝ ձայնաւորաց և այլ անդամք մարմնոյն[15] բաղաձայնից։ Արդ որպէս ոմանք յանդամոցն առաւել աւգնականութիւն տան զգայութեանց և այլք դուզնաքեայ և կէսք զմիջինն, նոյնպէս և բաղաձայնքն. նուրբք առաւել աւգնեն քաջաձայնութեան[16], իսկ սառաւրքն նուազ և միջակ զհասարակն երկոցունց։

Բայց ոմանք ի բաղաձայնիցն զկիսաձայնին առ ձայնաւորսն[17] զեկուցանեն հանգամանս ի սուլմունս[18] և ի մրմունջս. և այլք վատաձայնք[1] ըստ առակի ոգրերդակին, զի հարկաւորապէս արուեստն զքաջաձայնութիւն խնդրէ։

Նա և կրկնակացդ հանգամանք այսպիսի. յորժամ մի գիր բաւական լիցի ունել զերկուց տեղի, քանզի ասսուածազգեաց[20] և ասսուածազգեասս[21] մին զերկուց և մին զմիոյ լնլով զտեղի։

Տի նա և նա ի բնութիւն իմանի իբր թէ խոնաւագոյն, և արուեստաւնի զհամբառնալն և զնուազանալն, իբր թէ հոգին՝ յերկնանէ։

Իսկ վերնճանականք անուանց[22] ի հոռոմին և՛ յարաբանին, և՛ յիգին ունի կշռապէս[23], բայց ի մերումս անորիշ և յանբաւս հանգեալ[24]։

Տարբերցվածներ.— [1] միաւորութեան. [2] C դասաւորութեան. [3] A պարունակսն. [4] AB բաւական. [5] C համանյաւգաւոր. [6] B պատկանեալ. [7] C զրոշմունսն. [8] C զայր. [9] C թէթև. [10] C և կամ. [11] A նոյնս. B չիք. [12] A երեք, C երեքիին. [13] B երկուն, C երկու. [14] B հիւնն. [15] A չիք. [16] AB քաջաձայնութեանց. [17] C ձայնաւորն. [18] A սուղմունս, C սղունս. [19] A զատ ձայնք, B զատաձայնք. [20] C ասսուածազգեցս. [21] C ասսուածազգեասս. [22] C արուաց և իգաց. [23] AB չիք. [23] C հաւասար ունի յարապէս. [4] B անկեալ, C անկանել։

[է] ՑԱՂԱԳՍ ՎԱՆԳԻ

Արդ իբրև եգիտ արուեստաւորն զնիւթն և եցոյց զհանգամանս ձայնաւորացն և բաղաձայնիցն, կամի ի սմանէ այլեւս մեծագոյն յարմարել շինուած, որ է վանգ։

Իսկ զի՞ ճառէ զվանգէ և բուռն հարկանէ զփաղաւութենէ. զեկուցանելոյ աղագաւ[1] *զբնութիւն երկոցունց՝ զվանգի, իբր թէ ի միոջէ կողմանէ ձայնաւորն վանգեալ*[2] *իցէ ի ձայնորդացն, իսկ փաղաւութիւն՝ շուրջանակի։ Իսկապէս է ընդ ձայնորդսն փաղեալն՝ ընդ միումն կամ ընդ երկուս, իսկ* պիտակն՝ *սոսկ* ա *և կամ* է[3]։

[ը. ՑԱՂԱԳՍ ԵՐԿԱՐ ՎԱՆԳԻ]

Եւ յորժամ ծանոյց զվանգին բնութիւն, զեկուցանէ այժմ զքանիւնութիւն երկարիցն եղելոց բնութեամբ և զդրութեամբսն[4] *միանգամայն, թէ որքան զոր երիցագոյն ունի ասասիճան։*

[1] *Արդ սկիզբն բնութեամբ*[5] *երկարն է ինքնաբաւ*[6] *և անկարաւտ ծակցութեան ձայնորդի, սակս*[7] *որոյ և առաջին տեղոյ հասաւ։*

[2] *Իսկ երկամանակքն վասն երկարիցս և սղիցս գոլով*[8] *պատճառս. երկրորդ նորա ցուցաւ։*

[3] *Այլ երկբարբառս, զի յերկուց խառնուածոց ունի պատուականութիւն*[9] *յերկայնութիւն*[10] *թէպէտ ոչ գերազանցեաց քան զերկամանակսն, համայն երկրորդին դասեցաւ։*

Զկնի սոցա դրութեամբ։

[1] *Որոյ առաջինն* աղց, *իբր զի միամաւր ոք զերկուս ձայնորդսն ձգելով զկնի*[11] *ինքեանս*[11] *դասեցաւ, թէպէտ և ոչ հանգոյն առաջնոյն, սակայն առաւելեալ*[12] *գեր զկնիսն.*

[2] *Որում ընդդէմ է* տատրակն, *զի որպէս յաղցիցն ղցաւն և զղատն յառաջկոյս ամփոփեաց* այրն, *իսկ ի տատրակին զտիւնն և զրէն և առ վերջին* այրն. *այսպէս, զի մին միշտ առաջագիր կարէ լինել* տիւնն ըրէին *աւրինակ իմն* արգալ. *և ուր այս դիպեսցի, հարկաւոր է կիտիւն զտիւնն և զրէն վերջնումն ձայնաւորին տալ։ Իսկ զի սուղ*[13] *և սպացեալ ասի, մի զի սուղ է* այրտ *և ըստ երկամանակի սպանայ ի տեղւոջ.*

[3] *Երկրորդ*[14], *զի հաւասար մատուցանէ զարժանումն զաւրէն եղբար եջիդ և ինիդ ի ձայնորդաց պատճառաւ, զի ոչ կարէ երբէք* բէդ կենիդ *առաջի դասիլ ընդդէմ* աղցին *և* տատրակին. *միումն՝ զի յառաջկոյս ամփոփեաց զբաղաձայնսն. և միւսումն՝ զի ի վերջ*[15], *զի պարզ ձայնորդ է* կենդ։

[4] *Նոյնպէս կրկին ձայնորդք միմեանց ընդդէմ*[16] *են.* հեզիկն, զիկն *զաւրութեամբ զայն եջին եւ ձեռն, իսկ կետիւն՝ ինիդ։*

[5] *Բայց* աջդ *և*[17] *կիտիւ*[18] *և զաւրութեամբ ջէդ* այրին։

Տարբերվածներ.—[1] C յաղագս. [2] C զաւղեալ. [3] C ապ կամ է. [4] B դրութեամբսն, C զդրութեամբն. [5] BC բնութեան. [6] A ինքն բաւ. [7] C յաղագս. [8] C յոլով. [9] AB յերկուց... պատուականութիւն՝ չիք. [10] C չիք. [11] BC զինքեամբ. [12] C առաւելն. [13] BC սուղ. [14] B երկիրդ. [15] A զվերջ, B զի վերջ. [16] B դէմդէմ. [17] C չիք. [18] C կիտին։

[Բ. ՅԱՂԱԳՍ ՍՈՒՂ ՎԱՆԴԻ]

Այսպէս գնելով բնութեամբ երկայնս և սուղս, իբր զծայրսն[1] քննեաց, ելն[2] զմիջոցն, կամի արդ զսուղ վանդիդ վերաբերել[3] հանգամանս[3]։

[1] զնախկինսն[4] ի բուն սղիցն[5] յեջէ[6] և[7] յոյէ[7]։

[2] Իսկ[7] զմիւսդ[8] յայրէ երկամանակէ[9] ամփոփեցելոյ[9]։

[Ժ. ՅԱՂԱԳՍ ՀԱՍԱՐԱԿ ՇԱՂԱՇԱՐԱՑ]

Յետ որոյ[10] և հասարակ լինի բան երիս յեղանակս վասն դիւրութեան[11] իմն գտեալ ի Հոմերոնէ, զի մի միտք ինչ բանի զանխլացեալ ի դժուարին չափոցն ծանկիցին, որ հասարակապէս բան չափոյ[12] յերկայնիցն[13] և սղիցն մատուցանէ ի տեղիս աւժանդակութեան[14]։

[1] Եւ է առաջնոյ յեղանակին հանգամանք այսպիսի. յորժամ ասէ «Ինձ բնա[ւ] ես ոչ իրիք դու պատճառ, արէ՛, այլ ասասուածքն»։ Արդ առաջի վանդիդ տեղի ի բնաւ իսկ տապս, թէ բնութեամբ և թէ դրութեամբ միշտ գերկայն[15] և եթ խնդրել։ Իսկ երկրորդ վանդդ[16], զի ի ձայնաւոր երկայն յանգեցաւ և երկրաբրբառն և զմին[17] յարուցեալ[18] եչն, խորտակելով զդա և արգելլով սատակարար աւրինակ իմն զալիս ծովու վէմ պատահեալ, իշխանութիւն ետ առնել և սուղ, որ է ատեղն։

[2] Իսկ երկրորդ՝ «Պատրոկղէ, ինձ հիքիս կարի յոյժ սիրեցեալ անձինն»։ Վասնզի սովորութիւն է նային[19] զաւրէն մոմոյ[20] երբեմն կակղանալ և երբեմն խստանալ։ Արդ առաջին վանդիդ կակղանալով ընդ թոյլ եդ գերազանցել անձայնիդ, զի արասցէ երկայն։ Իսկ երկրորդ վանդիդ խստանալով դատապ զաւրէն[21] մոմոյ ցուրտ արգել զվատաձայնն առնելով սուղ, որ է ատեղն։ Եւ յորժամ սղացուցանել բան այսմ աւրինակի զվանդդ ձայնաւորի պէտք են և կամ սղի բան ոյի[22] սղացելոյ բան երկամանակին, զգուշանալով յայլոց ձայնաւորացն և զնայի և զվատաձայնի զնոյն պահել խարութիւն։

[3] Իսկ երրորդ՝[23] զնեստոր ոչ խաբեաց խոշիւնն թէպէտ յումպ էր։ Յորժամ երկրորդ վանդին ձայնաւոր սուղ դիպեցի[24] միով բաղաձայնիւ և բանն երկուք վանդիւք միայն զկատարուն առնուցու[25] և յաջորդ վանդն ի ձայնաւորէ հաւիցի, իշխանութիւն է քեզ առնել համբոյր, թէպէտ և սուղ է բան այլում կարծեաց. և հաստատի այս, զի ամենայնի խնդիր թէպէտ և փոքր իցէ, կատարելութիւնն[26] է այսոցիկ շաղաշարաց։

Յայտնեն և պատմութիւնքն առաջնոյն Պրիամոս Տրոիացի[27] և Պարիս,[28] որոյ զկինն յափշտակեալ էր ի հելլենացոց որդին նորա՝ Պրիամոս[29] քննելով զ'ի վերայ եկելոցն դործ՝ ասելով ցաղջիկն. «Ե՛կ այսր[30], զի չես դու այսմ պատճառաւ»։

Իսկ երկրորդին՝[31] Աքիլլէս[32] Հելլենացի և Պատրոկղէ դայեկորդի

Տարբերցվածներ — [1] A ծայրն. [2] C չիք. [3] C հանկամանս ի վերա բերել. [4] C նախ ղինդ. [5] A սղցիցն, C նուազիցն. [6] C եդ. [7] C չիք. [8] C հիւնդ. [9] C և կամ փոխեցելոյ. [10] AB յետոյ. [11] AB դիւրութիւն. [12] C խորհրդոյն. [13] A երկարիցն. [14] AB աւժանդակութիւն. [15] B գերկայնութիւն. [16] A վանդի, C վանդդ. [17] B դիմին. [18] C յարացուցեալ. [19] A չիք. [20] C մարմնոյ. [21] BC հանդոյն. [22] C սղիատ և. [23] ABC երկրորդ. [24] C դիպեցի. [25] AB առնու. [26] C թէպէտ... կատարելութիւնն է՝ թէ և փոքր ինչ կատարելու է. [27] A Պրամոս Տրուացի, C Պրիասոստրիացի. [28] AB Պարիկրիս. [29] C որոյ... Պրիամոս՝ չիք. [30] C եկ այսր՝ եկն կայ արդ. [31] A երկրորդումն, B ի յերկրորդին. [32] C Սքոդոս։

նորա. և իբրև ետես Աքիլլէս զՊատրոկղէ մեռեալ հանդերձ քաջութեամբ՝ լալով հարճն Աքիլլեայ ասէ, թէ՝ «զԲեզ[1] յամուսնութիւն տամ Աքիլլեայ». ասէ՝ «Ինձ հիքիս կարի յոյժ սիրեցեալ անձն»[2]։

Իսկ երրորդին[3] Նեստոր ոմն հմուտ պատերազմի, զոր տուեալ ցՄաքաւոն[4] ոմն բժիշկ վիրաւորեալ, զի դարմանեսցէ. որով դարմանելով զվէրսն[5] տայր նմա հաց և սեաւ գինի։ Բայց իբրև յոյժ ամբոխէր յոյզ պատերազմին, ոչ սիրելի լինէր նմա ըմպումն գինւոյ, քան թէ երթալ ի գործ պատերազմին[6]։

[ԺԱ. ՑԱՂԱԳՍ ԲԱՌԻ]

Յայտնելով սորա և զնառարակ շաղաշարաց զհանգամանս՝ հիմն արկանէ արդ բանի զրառս, որպէս նաւի զողնափայտն։ Եւ լսի բառ ասացուած, որ է ըստ միում վանդի և կամ ըստ երկուց և կամ ըստ երից. նշանակն մի է։ Իսկ մասնդ է սեռ և զուղնաքեայ առ բան ասի, որ է մեծագոյն քան զդա. և դարձեալ՝ զի զոյզն ասի. որ թէև եցէ իսկ զուղնաքեայ, որ թէ ինքն փոքր է, մեծի ունի զաւրութիւն։ Ըստ որմէ[8] և բաղդասութիւն է[9] բաղեալ իմն կարգաւորութեամբ և անդամ լեալ բառդ բանի։ Եւ որով իմանալի է և զայն, զի ամենայն արուեստաւոր կամի իւր առաջի արկանել, ոչ առանց նիւթոյն գիւտի մատրերէ. որպէս և այս արուեստաւորս[10] յառաջ եդիտ զնիւթն, որով ընդ աշտիճանսն էլ մինչև ի բանսն։

[ԺԲ. ՑԱՂԱԳՍ ԲԱՆԻ]

Եւ արդ կամի ցուցանել որքանք ի սմա են բարժանմունք մասանց և այլ ևս պաշտեցեալ լինին կիրք։

Եւ հետևեալդ[11] ասելով զդա որպէս[12] զհետանկեալ բառիցն համեմատ[13] իմն շարադրաց, զորս ի մանրամասն գործոյն իւրեանց ասացին հետևակս, իսկ զքերդողս՝ հեծեալս, քաղելով ի յինքն և անդամս գործելով, որով և ինքնակատար երևի և զհանգամանս մատցն և զփոփոխմունս գլխոցն ըստ արամախոհութեան բաւականաբար յայտնիցէ, ոչ ընդ տարակուսութեամբ զաւրէն վանդին և կամ նոյն ինքն բառիս ինքնրատինքեան յանդեալ։

Բայց զմասունս բանիս ոմանք և զառասութիւնն յաւելով ասացին ինն։ Իսկ իմաստասէրք և զանուան մասունս ընդ անուան դասելով[14] և բային ընդ բայի, ածելով առ նոսա զշաղկապն և զուղն[15] և զնախադիրն, ասացին հինգ, այլ սա զառասութիւն իբրև զտեսակ դասելով ընդ անուամբ, ասաց ութ, իսկ Արիստոտելէս զտորրասութիւն և զբացասութիւն և զբացերևութիւն ընդ անուան և ընդ բայի՝ ասելով հինգ գոլ։

Բայց մասն ասելով ասատնաւր և ոչ տեսակ՝ երևեցոյց զմասն, զի յամենայնի ի վերս է տեսակ քան զմասն, որպէս ի վեցսն ի սկսբան արուեստիս քերդողն[16]. զի զնոսա թէև ոչ զվեցն ունին, ոչ է կատարեալ քերդող, իսկ ճարտասանն միով միով։ Այլև յայսմ վայրի, զի զաւրէն սեռի

Տարբերվածներ — [1] AB քեզ. [2] C անձինս. [3] AB ի յերրորդումն. [4] A Մաքաւ, B Մաքասն, C Մաքսոն. [5] C զվէրն. [6] A ոչ... պատերազմին՝ չիք. [7] A որ թէև եցէ, C և թէև եցէ իսկ. [8] C ըստ որում. [9] A բաղդասութիւն է, C բաղդասութենէ. [10] A կամի... արուեստաւորս՝ չիք. [11] A չիք. [12] C իբր. [13] C համեմ[մատ]-ից հետո տեքստն ընդհատվում է. [14] A դասել. [15] B չիք. [16] B չիք։

զայլ ևս մասունս կարէ գոյացուցանել, որպիսի ինչ անուն զնոյն հետևեալն և զնոյն զուգապատիւս ոչ երէց և ոչ կրասեր, այլ տեսակն թե ունիցի մասունս, որպէս ատենականն զամբաստանելն և զպատասխանելն երէց և կրասեր[1], զի նախ ամբաստանելն լինի և ապա պատասխանի առնել[2], նոյնպէս և այլքն, յորոց գիտելի է և զայս, զի [է] տեսակ, որ[3] զաւրէն սեռի բարժանի ի մասունս և ոչ ինքն ինայ որպէս մարդ[4], և է, որ բարժանի և ինքն ինայ, որպէս ծառ ի պտուղ և յոստս[5] և ի կեղև։

[ԺԳ. ՅԱՂԱԳՍ ԱՆՈՒԱՆ]

Զկնի որոյ իմանալի է և զեղեալն վէճ անուան և բայի, քանզի ոմանք կամեցան նախադասել զբայ, իբր թէ [ի] շինելոյ շինելն և ի նաւելոյ նաւելն. իսկ այլք ոչ նմանապէս, այլ զանուն ասացին նշանակիչ գոյացութեան, այլ զբայ՝ պատահման։ Եւ զի այսպէս է. նախ յառաջանալ իզկպ է գոլոյն[6] գեր քան[7] զպատահեալն, յայտ է թէ անուն քան զբայի։

Իսկ մասնդ է սեռ. նոլովականաւ՝ իբր սահմանաւ[8] զատոյց ի բայէն։ Մարմին և իր ասելով նշանակել ի գերանունութենէ որոշեաց, իբր զի մարմինն, որ շաւշափի և ըմբռնի, և իբ, որ մտաց հնչի և միայն լսելեաց լսի՝ անըմբռնելի։ Բայց և զերս ասասնաւր պարտ էր ասել անմարմին, քան զիր[9]։

Հասարակն մարդ, յատուկն՝ ոմն անուամբ իսկիւ։

Իսկ սերք ոչ ի գոյացութեան վերակոչին, զի ոչ էր ընութիւն քննել, այլ զձայնի[10] նշանակս յայտնել, ոյք են ի Հռոմին լիով արականին և իգականին և չեզոքին, իւ և կամեցի ոք յայտնել ըստ երեցունց կարողութիւն է, որոց ոչինչ ի մերումս երևի. միայն սոակ և սակաւ ինչ, իբր թէ հայր և պատանեակ արուին կոչումն և մայր և աղջիկ՝ իգականին այլ ևս նոյնպիսիք։ Բայց յաւելուլն ոմանց զհասարակն և մակաւասար ոչ զինքն, այլ զայլս զատուցանէ արուհատաւորս այսմ պատճառ, և է հասարակդ այսպիսի, քանզի ձի և շուն հասարակ[11] կոչին երկոքումբք ձայնիւք, իսկ մակաւասարն ոչ ևս, այլ ի վերս քան զհաւասարն իգականին անուն և եթ է ծիծեռն և աքիս, նոյնպէս և արականին արծուի և առիւծ, քանզի այնմ միայն հանդիպին։

Եւ նախադաղափար[12] իմանալի է նախաբերնակ իմն[13], յորմէ ածանցին, իբր յերկրէ՝ բոյսք և կենդանիք և[14] ըստ նմին, և բան՝ ի մարդոյ[15] և բերք՝ ի սերմանց պտղոց[16] անկոց։

Բայց տեսակք ասին, զի որպէս[17] ասացեալքն ածանցին իբր յաղբերէ վտակ, այսպէս յանուանէն[18] իրքն՝ երկիր և երկրային, երկին և երկնային, ջուր և ջրային և որք նմա այսոցիկ ճշգրտեսցին[19]։

Իսկ ածանցայն տեսակս զի յոյժ անհնուն և անբաւ են, թողով զայլոցն յատուկ, զրանաւորէս բուռն ինար, առաջնորդութեամբ յայտնել, ասելով նախ՝

[1] զնայրանուանականն այսպիսի. հայրանուն ատոյգ ասի ըստ հարա-

Տարբերվածներ.— [1] A այլ... կրասեր՝ չիք. [2] A առնուլ. [3] A չիք. [4] A չիք. [5] B յոստ. [6] A զոլ այն. [7] A չիք. [8] B սահման. [9] AB զի իր. [10] A զնայնի. [11] B հաւասար. [12] A նախզաղափար. [13] B ինչ. [14] B չիք. [15] A ի բարդոյ. [16] B պտղոյ. [17] B որպէս զի. [18] B յանցանէն. [19] B ճշգրտեցին։

զատ գաւակին յառաջ զոլոյ նուիրեալս և զանունն ի նմանէ գնել, իբր Արտաւազդ Վարդանեան. իսկ պիտակն է նախնեացն։

Եւ գաղափարք հայրանունացն, որպէս թէ անուն որդոյն զառաջին վանգն ի հաւրն անուանէ ունիցի, իբրև ի Բաբայ՝ Բաբէն[1] և ի Սամայ՝ Սամէն, ըստ որում և Գորգայից գաղափար է, զի որպէս գոքա ճեղքելով[2] ի համանման լեզուէն խաւսս, նմանապէս և Հոռոմին զորացի[3] ոմն անուանեալ լեզու։

Նովին ձևով[4] ըստ հայրանունացն և իգականացն երևի գաղափար՝ կոչեցեալ ի հարանցն[5] ի Մանայն Մանանոյշն և ի Տրդատայն՝ Տրդատուհի, որոց թէպէտ ոչ իրաւ համարեցաւ Հոմերոս առնել զգաղափար, իբրև անարժան համարեցաւ[6] յիւրն պայծառ և հզաւր արարուածս խառնել զտկար և զնուազս բնութեանցն անուանս, այլ զկնի եկեալքն արժանաւոր վարկան ըստ ամենայն կարեկցութեան նոցա և յայսմ ոչ զատուցանել։

[2] Նա և սատացականդ՝[7] իբր թէ պարառեալ զինքեամբ սատացուածոյն զատացողին անուան, առինչունակաբար կոչեցեալ ի նմանէ գիրք և կամ այլ ինչ կենցաղաւորուս[8] սատացուածք։

[3] Այլ բաղդատականացն են ձևք երկու. կամ զոյգ ընդ զուգի, որպէս ի միոյ ազգէ էին և քաջք երկոյքեան՝ Դաւիթ և Սաւուղ. և կամ նուազ ընդ առաւելի, որպէս գեթացիքն ընդ Դաւթի, որոց թէ ընդդէմ թուիցի ոմանց, զի Գեթացիքն բազումք, բժշկի այնու, զի ոչ համեմատեաց զաւրութիւն բազմացն առ Դաւիթ, այլ որով նուազ գտան։ Բայց գաղափարք[9] բաղդատականաց են, յորժամ յերկուց ընթացողաց ասի՝ ոմն քան զոմն արագ, սակաւ ինչ նշանակէ, ապա թէ՝ արագագոյն գոլ, ամենայն ումեք[10] առաւելուլ իմանի. սոյնպէս և սաստկագին, ուժգին։

[4] Եւ գիրադրականդ ամենեին իմանի առանց բազդատութեան ծայրք բանին[11] և ընդդիմակ ի նմին[12] յորժամ ասիցի սրանչելիս, բնաւ իւիք գերազանցեալ զարմանալեաւք, նոյնպէս և հակառակ նորին։

[5] Այլ փաղաքշական է աղջկական[13], որ ոչ առացաւ ի մերուսն վասն պատկառանաց, վասնզի[14] այնպիսեացն[15] բնութիւնն սովորեաց ըստ անկատարութեան[16] տիոցն և զխաւսան[17] անկատարս ասել, այլ ի փաղաքշելն վասն սակի հարկաւոր է զմեծն և զպատուականն առնուլ ի մէջ անուանց թախանձանաց, որպէս զի ի խնդրելոյն[18] մի ինքնակարին[19] ի գձուձն կոչելոյն հանդիպեսցի։

[6] Յարանուն է՝ յառաքինութենէ՝ առաքինի և ի խրախճանութենէ՝ խրախճան։

[7] Իսկ բայածական[20] յորժամ սիրեմ ասի բայ է և սէր՝ անուն, արդ ածանցելով ի սէրոյ անտի [սիրուն հատատի]։

Դարձեալ ի ձևս[21] անուանց պարզ՝ իբրև մեկնակ ինչ անուն. ի նոյն յաւելեալ միւսն՝ ճանաչի՝ բարդ, և յարաբարդ[22] անուն լինի՝ սուղ ինչ այլ յար յինքն ունելով. և յարաբարդ ասի, զի ի պարզէն զատ և հուպ ի բարդն մատամբ, այլ ոչ նոյնպէս։

Տարբերվածներ. — [1] B Բարդէն. [2] B ճեքելով. [3] B զորացի. [4] B ձայնիւ. [5] A ի հարսանցն. [6] A Հոմերոս... համարեցաւ՝ չիք. [7] B սատացականք. [8] B կենցաղոյս. [9] A գաղափար. [10] B ուսանք. [11] A ծայր քնարին. [12] A ընդդիմակին. [13] A աղճկան. [14] A չիք. [15] A զայնպիսեացն. [16] A անկարգութեան. [17] A խաւսն. [18] A ի խնդելոյն. [19] A այլ ինքանկարին. [20] AB բայատացական. [21] A ձևոս. [22] A յարբարդ։

Իմանալի է և զարմազանութիւն բարդիցն, վասնզի անհնար է անուան[1] իմիք առանց այսց լինել զարմազանութեանց[2], կամ եթէ[3] յերկուց լիոց և յերկուց պակասից, և դարձեալ՝ նախադասելով զլին և զպակասն ի հետ բերելով, և կամ առաջի զպակասն ունելով և զլին ի վերջէ:

Բայց թիւ ասասնաւոր չափ իմանի, իբր թէ առանց յաւելլոյ և նուազութեան չափեալ լինի եզականդ ի մի և յոգնականդ՝ յանբաւս: Այլ է երբ[4] երբեք, զի և եզականիդ գիծ զյոգնականն բերէ նշանակ, որպէս թէ պար ասելով կամ տոհմ, նոյնպէս[5] և յոգնական[ի]ն՝ զեզականն, որպէս Խոյարաւ-ցիքն[6] և զերկուսն:

Իսկ ասելն նախ հոլովս և ապա ուղղական և երևեցաւ ոմանց ընդդիմութիւն ի տեղւոջդ[7], որպէս թէ ուղղական և[8] կամ հոլովական պարտ է անուանել. բայց բժշկեցաւ այսպէս, թէ բոլորիցս ընդ արեգականս լինելութեանցս [անուանք կոչեցան շնորհիւն աստուծոյ] և կամ զոր ի նա զաւրացոյց[9]: Արդ ըստ ի վերուստ գրութեանն անուանն անգուն ասի նոյն ինքն ուղղականն, աւրինակ իմն գրչի ի վերայ կակուղ իմիք նիւթոյ նկարմամբ ուղեղ կացելոյ և անդուստ ապա հոլովումն առնելով ի սեռական և ի տրական և որ ի կարգին[10]:

Եւ զի անուանական ասի ուղղականն, իբրև սկիզբն իմն և պատուականագոյն. իսկ պարզ՝ մեկնակ, անշարադիր[11]:

Եւ սեռականդ[12] ստացականդ է ըստ ինքեան հանդիպեալ ստացուածոյ և կամ հայրենոյ:

Բայց տրականդ[13] լսի թխթական և զի ոչ լսի հաւաստի ի մերումս, որ և ի Հռոմին յայտնի[14], տրականն ձայնիւ յայսմ անուանէ այսմ անուան առաքեալ. յորոց[15] ցուցականն յառաքականէն ըստ երկուց դիմաց. յորժամ առաքեսցի ոք առ ոք յումեքէ, զհեռաւորն նշանաւոր բանիւ ցուցանել և զմաւտաւորն երևին տեսութեամբ:

Իսկ հայցականդ[16], որ ըստ Ելլենացւոց լեզուին պատճառական, է այս. քանզի յորժամ ի չար ինչ կոչեսցի ոք կամ ի բարի ընդ ձայնին զեկուցանէ զպատճառն:

Նա և կոչականդ[17] յայտնի է առհասարակական, զի ովդ, որ է նշանակ կոչականի, հաւասարապէս երթեալ լինի ի վերայ դիմաց և իրաց, բարեաց և հակառակին:

Իսկ ենթանկեալ անուամբդ, որ է որպէս ընդ անուամբ անկեալ և առաջիկայ մասունս, զոր ասացեալ է զտեսակէ[18]. ոչ որպէս տեսակս[19] ի սեռէ բարժանեալ, այլ միայն ձայնիւ նշանակաւ[20] հարկաւոր անուամբ վարի տեղւոջդ:

Բայց վասն [1] իսկիդ և [2] առասականիդ հակառակութիւն եղև յոմանս: Պղատոն զառասականդ դասեաց առաջին, իբր թէ ի տեսակաց ոմանց տիրականք գաղափարեալ ըստ ժամանակի: Իսկ Արիստոտէլ՝ զիսկդ, այսպիսի եթէ տեսանելդ հաստատուն է քան զլուր, որպէս զարեգակն ոչ ոք[21] լինի կարող ժխտել, իսկ զանեռևելի ինչ՝ բազումք, վասն որոյ և նախադասեցաւ տիրականս Մարկոս քան զառասականն մարդ:

Տարբերվածներ. — [1] B անուն. [2] B զարմազանութեանցն. [3] B թէ. [4] B չիք. [5] B նոյն. [6] A Խոյարաւրն. [7] A տեղւոջ. [8] A չիք. [9] A զաւրուց. [10] A և անդուստ... ի կարգին՝ չիք. [11] A անշարադիրն. [12] A սեռականիդ. [13] A տրականիդ. [14] A յայտի. [15] B զորոց. [16] AB հարցականդ. [17] B կոչնականդ. [18] B տեսակս. [19] B չիք. [20] A նշանակեալ. [21] B չիք:

[3] Եւ յերկոցունց[1] ի վերայ առեալ[2] լինի եռակի գով կամ պարսաւ, որ է ոգւոյն մեծ, քան զմարմնոյն, և մարմնոյն՝ քան զարտաքնոցն երկաքանչիւր գովութիւն և հակառակն։

[4] Առինչուցակ՝ սաոյգ, որ միմեանց հակադարձին և զմիմեանս բառնան, որպէս տէր զծառայ և հայր առ որդի։

[5] Իսկ իբր[3] առինչուցակն նման սմա, այլ ոչ նոյն, վասնզի բառնալն զմիմեանս գիշերոյ և տուընջեան ոչ ևս։

[6] Եւ հոմանուն լինի ըստ պատահման և մտածութեան. պատահմամբ՝ յորժամ երկուց ոմանց նոյն դիպեսցի[4] անուն տիրականդ [և առասական՝ արծուի՝ թռչուն և արծուի՝] շինածոյ ի փայտից, իսկ մտածութեամբ՝ ըստ պատուոյ, յուսոյ, ազաւթից և այլոցն ևս։

[7] Քանզի փաղանուանն ըստ քերթողաց լսի բազմանուն, իբր թէ սուրն բազում ունի անուանս դիւրեաւ բարդեալ. իսկ ըստ իմաստասիրաց է փոքրանուն, զի կենդանին բազում բնութեան[5] անուանս փաղեաց։

[8] Բերանուն կոչի յիրացն բերմանէ՝ ի գաղթից՝ գաղթայր[6] և ի վանմանէ՝ վանեալ։

[9] Երկանուն է, որպէս ումեմն կոչեցաւ Պետրոս և Կեփաս. արդ եթէ ումեք կոչեցաւ Կեփաս միայն, ոչ անդրադարձի ի նմին հաւասարապէս և Պետրոս, որպէս հրոյ ջերմ գոլ և ջրոյ խոնաւ է հարկաւոր[7]։

[10] Բայց մականուն է հանդերձ այլով անուամբ կամ յատաքինութենէ և յընդդիմակէն ասի, իբրև Յովհաննու՝ Որդի որոտման, զի զաւրէն որոտման հնչեաց զբանն ընդ տիեզերս զաւետարանական վարդապետութիւնն[8]։

[11] Ազգական է, որպէս միոյ ազգի մարդ ինքեամբ յատուկ կարող է զբաւանդակն յայտնել զազգ։

[12] Հարցականն ըստ երից դիմաց. մի՝ իբր թէ զբոլորակն[9] առաջի դնելով հարցանէ զիրն, ապա զորպիսութենէն և դարձեալ զորչափութենէ. սոյնպէս և զդիմացն բնութիւն քննել և որպիսի և որչափ։

[13] Իսկ եթէ անպատեհ իցէ ասելն, զանցանէ, ընդենելով ի յապա զխնդիրն, յայնժամ անորիշ եցոյց իբրև զանյայտ ի բազմաց։

[14] Այլ դարձեալ ի վեր բերելովն և նմանեցուցանելովն և հատուցանելով զխնդրելին բանիւ, այսպէս յայտնի, իբր թէ՝ այսպիսի, այսչափ, այսքան։

[15] Բակձաձակաց[10] լինի բակառական, որպէս պարսաելով եզական թուովն զբազմաւք բակառեաց[11]։

[16] Իսկ մակբաշխ է, եթէ յիշխանէ բան[12] և կամ այլ ինչ պարգևեսցի[13] երկաքանչիւրոց և կամ իւրաքանչիւրոց, որում ասցին, ի վերայ նորա երթայ և վերբերութիւնն։

[17] Պարունակն պարփակեալ յինքեան տեղեաւն՝ կուսասատանն զկոյսն և ընկուզուտն զընկուզին։

[18] Քերդեալ է որակարար[14] բարառնութիւն, որ է որակարարութիւն, որպէս ի քաղցրութենէ քաղցրութիւն և ի դառնութենէ դառնութիւն. նոյն-

---

Տարբերվածներ. — [1] A յերկուցն. [2] B վերառեալ. [3] A իբրև. [4] B դիպեցի. [5] B բնութիւն. [6] A գաղթեայս. [7] A հարկաւորապէս. [8] B քարոզութիւնն. [9] B բոլորական. [10] A բակձաձական. [11] A զբազմաւ բակառեալ. [12] A չիք. [13] արգևեցի. [14] որակարար։

պէս և Հոմերոս յիրաց պատերազմին, իբրև տես զնոսա խուճապեալս, ասաց՝ «զխաղին և զվրդովն և զյոյզն»։

[19] Սեռական է, թէպէտ բազում ուրեք ասացաւ, հաւասարեալ ասասանաւոր ունի, զի կենդանին բազում տեսակս կենդանեաց ունի ընդ ինքեամբ, նոյնպէս տունկն՝ զծառս։

[20] Իսկ յատկական ի կենդանոյն եղն, ի տնկոյն՝ եղենի[1], այսպէս անհատ հոլով յիւրաքանչիւր բնութեան[2] և ի միմեանս անխառն և լինի անհատ մին ըստ կարծրութեան, որպէս ադամանդ, միւս[3] ըստ մանրութեան, որպէս հիւղէ[4] ի շողն, երրորդ ըստ անխառնութեան՝ ձիոյն յարջառոյն տեսակ։

[21] Զանազան[5] իմն[5] դաս[6] և թիւ, քանզի դաս ասի, յորում կարգաւորութիւն ընտրի ըստ աշխիճանի։

[22] Եւ թիւ՝ թէպէտ ի սաորուսա ի վեր և կամ վերուսա ի խոնարհ սկսցի, անհակառակ է։

[23] Բացարձակդ ասելով զասաուած, բան, դյառաջագոյն սխալեալն[7] իւր բժշկեաց. և է բացարձակ մի ըստ այնմ, զի ոչ տեսանի գոյութեամբ և ոչ[8] ի քննելն ըմբռնի արարչական զաւրութիւնն, բայց ի հեռուստ հաւատով իմանի առ իւրաքանչիւր ումեք. և միւսն՝ բացարձակ ձայնիւ լսի և համառաւտ ի բաց տուեալ, որպէս զպտուղս հոգոյն զսէր, զխնդութիւն, զխաղաղութիւն և որ ի կարգին է։

Եւ զի յերկարեաց զմասունս ճառիս, յիշատակէ վերատին զանուն, զի ծանոյց, եթէ սորայ են ասացուածք ամենայն։

Եւ հաստատութիւն ասի յիրաւի ներգործութիւն և կիր, զի երկոքումբք[9] է հարկաւոր վարել անուան[10]։

[Ժդ. ՑԱՂԱԳՍ ԲԱՑԻ]

Բայց թէ որպէս նախադասեցաւ անուն քան զբայ, յայտ է ցուցանելովն. իսկ բայի[11] արժանաւոր իսկ էր երկրորդիս հասանել դասու և սկսմամբ[12]։

Իսկ սահմանեալ զատուցաւ յայլոցն բայ զաւրէն սեռի անհոլովիւ որոշի յանուանէ. և զի կայր խառն ևս ընդ այլսն և ած յոլովս ի վերայ որպէս ի վերայ Սոկրատայն, զի ի բոլորիցդ զատուացէ։

Եւ զի՞ յարիւանայ՝ զհետ երթայ բայի։

Բայց զի՞ նախ զխոնարհութիւնս[13] ասաց քան զամենակ. զի խոնարհութիւնքդ են[14] բերող ամենակաց և յայտ ի խոնարհմանցն է։

Տրամադրութիւնդ են տրամախոհութիւնք[15] և է ոչ ի վերայ հաստատութեան. և է բուն և սոյգ ներգործութիւն գանեմն և կիրք՝ գանիմն և միջին՝ մոռացայ որ և կամ մոռացեալ եղէ[16]։ Բայց յայլ վայրս[17], որպէս Կորճայք[18] վարին կրականին ոչ[19] հմտաբար, այլ ըստ սովորութեան։

Անուանց նախագաղափարիչ՝ անուան զրունն և զածանցեալն նշանակէր. իսկ սա ի մի[20] սոսկ կայ ի վերայ ձայնի միով վանդիւ ածանցեալ։

Տարբերցվածներ. — [1] B իւղենի. [2] A բնութիւն. [3] A մին. [4] A հիշէ. [5] B զանազանին. [6] A դաս. [7] A սղալեն. [8] A չիք. [9] A երկոյքումբ. [10] A անուամբ. [11] B բայդ. [12] A սկման. [13] B խոնարհութիւն. [14] A չիք. [15] B տրամախոհութիւնք. [16] B եղէայ. [17] B վերս. [18] B կորճեայքդ. [19] A ոճ. [20] A իմ։

Զեր՝ նոյնք ըստ անուան ձեւոյ։

Թիւք՝ եզական միոյ նշանակիչ, երկուորական՝ մեր չիք, յոքնական՝ յանբաւս[1] անկանի։

Դէմք ասին ոչ զիրաց, այլ զդիմաց իսկ, իբր թէ նախ՝ յառաջնմէն բանն, երկիր[2] առ մաւտաւորն, երիր՝ առ ևս հեռաւորագոյնն։

Ամենակ հաւաստեաւ երեք՝ ներկայ, անցեալ, ապառնի։ Ասացին ոմանք զներկայ իրիցագոյն վասն անցելոյն ընդ նա երկուցն ևս. և այլք՝ զանցեալն յաղագս յառաջագոյն անցանելոյն ըստ նախադասութեան։ Դարձեալ հարցաւ յոմանց՝ զի՞նչ է ժամանակ՝ ի գոյի՞ց, թէ՞ ոչ գոյից. ոյք ի գոյից ասացին զայս աւրինակ, թէ լուսաւորաց շարժմունք և բնաւ լինելութեանցս[3] աճմունք և յարմարութիւնք աշխարհի ի ժամանակի կատարին. իսկ Արիստոտելէս ասաց ի յոչ գոյից, որպէս ի յուշկապարկացն համբաւ անուամբ միայն և ոչ ճշմարտութեամբ. զանցեալն այսպէս աղարտէ, զի իբր անց, ապականեցաւ. զապառնին՝ զի չէ իսկ ի միջի. զներկայն՝ անհերևութաբար իմն, զոր աւրինակ թէ ի քուն ոք իցէ և կամ յայլ սրաւսանս ինչ, նա զիւրն կատարէ զընթացսն ըստ աւրինակի ջրոյ իջանելոյ ի խողովակէ յաւազան[4] ինչ[4] տեղիս. իջանէ յաւազան[5] և ոչ երևեցաւ, և ընդ իջանելն ծորի։

[Ժե. ՅԱՂԱԳՍ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ]

Առ որով ասելի է[6] զլծորդութիւնս, զի խառնուած է սորա՝ ձեռն տալով ստուգաբանութեան։ Եւ լծորդութիւն ասի, յորժամ եկեալ մի ի լծոյն՝ մատնէ ընկերակիցն՝ բառնալով[7] զլուծն, որպէս բենն զմենի և կամ մենն զպէի, նոյնպէս և այլքն։

Եւ կարգաւոր՝ զի ոչ այլ ընդ այլոյ, այլ յանցիւր կարգի մատնիցեն. յորոց լծորդաց ութքդ[8] առնուն զոլորակն, յորժամ սոսկ ասիցի բերեմ, իսկ յաւելեալ զայս ինչ բերեմ՝ ոչ ևս։

Արդ ծախելով զբոլոր բաղաձայնսն ի լծորդսն, կամի արդ[9] զձայնաւորսդ ի նմին դասու լծորդաց դասել. եչդ, ըստ որում նշանակէ զգովեմն և դիեմն, ասեմ լծորդ, իբր զի յատուկ է ոչ անուն[10]։

[Ժզ ՅԱՂԱԳՍ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ]

Այլ վասն ընդունելութեան, զի հաստատակ ասի գոյանալ ի բայէ և յանուանէ. եթէ կատարեալ ունէր զերկոսեան, ապա նախագահ դասէր քան զերկոսեան. իսկ զ[ի ի]միոջէ մասն ինչ ունի և մասն ինչ՝ ի միւսմէն, այսր աղագաւ ոչ քան զնոսա նախկին, բայց ըստ նոցանէ[11] կարգեցաւ։

Իսկ եթէ զինչ է ընդունելութիւն, ինքն ըստ ինքեան անուանդ յայտնէ. բառդ ի գմա սեռ է. յարիւանայ՝ իբր զհետ երթայ ընդունելութեան որ ինչ բային անկք, բայց զի զդէմս ոչ յայտնէ և ոչ զխոնարհմունս, զի շինելն ոչ եցոյց զդէմս. իսկ այլք ի բային նոյնք և ի նմա։ Եւ զհոլովս ըստ անուանն, որպէս արարելով, արարելոյ և որ ի կարգին։

Տարբերցվածներ. — [1] B անբաւս. [2] B երիր. [3] B լինելութեանս. [4] B աւազին. [5] B յաւազն. [6] A չիք. [7] A բառնալ. [8] B ութիդ. [9] A արդեաւք. [10] A անուան. [11] B սոցանայն։

[ԺԷ. ՅԱՂԱԳՍ ՅԱՒԴԻ]

Յաւդ ըստ մերումս փոքր[1] ինչ նշանակ է, իսկ յաւդիւդ նշանաւոր, բայց այլ ամենայն նշանք դորա ի հայումս ոչ ինչ յայտնեն, այլ միայն եղեալ է՝ վասն զտեղիդ ընլոյ։

[Ժը. ՅԱՂԱԳՍ ԴԵՐԱՆՈՒՆՈՒԹԵԱՆ]

Վասն դերանունութեանդ կարգի[2] դիտելի է, զի որպէս անուն նախ կարգեցաւ քան զբայ, նոյն աւրինակ սա քան զմակբայն։

Իսկ դերանուն է փոխանականունութիւն[3] և թերանուն և հասարակ անուն. միդ՝ փոխանակ տիրականին, իսկ միւսդ՝ թերի քան զիսկն, երրորդ՝ հասարակաբար. զորաւրինակ ազգի մարդկան բոլորեցունց ասի մարդ, նոյնպէս և դերանունդ ամենայնի երթայ, ասելով՝ ես և դու և նա. բառդ՝ զաւրէն սեռի։

Իսկ յայտնել զորոշումն գիմաց, մի՝ զյանդիմանականացն իբրև է դա, երկրորդ՝ զհեռացեալն, եթէ պէտք ինչ նովաւ վճարեսցի, ասի՝ «եթէ նա աստ էր, կարող էր վճարել». նոյն ասել ի մէջ բերեր և որոշեցեր զիրընդրեալ դէմսն։

Արդ զի՞ զանուան նմանութիւն յինքեան բերէ. նախագաղափար ցուցանի իբր թէ զիմ, զքո, զնորա դէմս, իսկ ածանց՝ ի դիմաց տեղւոյ ստացուածն ոչ իբրև զարարչէն, այլ ի ստացողէն։

Սերք՝ արական, իգական, չեզոք՝ ձայնիւ նշանին ասացեալ. թէ յանուան[4] զի կատարեալ էր, փոքր ինչ ունէր, իսկ ի սմա՝ և ոչ բնաւ, զի մասն է, բայց յատուկ ըստ յիւրաքանչիւր գիմաց։

Թիւ՝ ըստ անուանն ի վերայ չափեցելոյն[5] երբեալ։

Հոլովք՝ առաւել ևս քան ի յանուանն ասա կարգեալ, վասնզի անդ է ինչ որ այլ զայլոյ ունի, իսկ ասա ասոյդ։

Իսկ զձևս յայտնի[6] է նախ անձն[7] իմ, անձն քո, անձն նորա և ապա ի կարգին զհոլովսն[8]։

Եւ զնախագաղափարդ՝ զի երկրորդէ և երրորդէ[9] հարկաւորաբար, կամեցեալ ցուցանել դովաւ զերկդիմի բնութիւն ածանցիդ. աւրինակ իմն, թէ ասիցի՝ իմոյ այգւոյ բերք և թէ այլ ինչ, միով ձայնիւ զինքն և զստացուածն զեկուցանէ։

Իսկ բաղաւդդ[10] իմանի[11] սղալանք արուեստաւորիս, զի յաւդի մասն էր և ոչ դորա. և է անբաղաւդդ պարզ բառ, իսկ բաղաւդդ՝ յաւելուած ունելով ի պարզն։

[Ժբ. ՅԱՂԱԳՍ ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ]

Յետ որոյ նախադրութեանդ[12] անուն և տեղի աննմանք, վասնզի անունդ նշանակէ առաջնոյ և տեղիդ՝ վերջին։ Եւ թէ սխալ էր, ոչ վարեցեալ լինէր մինչև ցարդ։ Իսկ նախադիր[13] ասի, զի յառաջ եղեալ լինի քան զանուն և զբայ ի բոլոր տեղիս իբր սպասաւոր, իսկ զի ոչ է քան զնոսա պատուական, աւրինակ իմն կարապետ քան զթագաւոր։

Տարբերվածներ — [1] B փոքունք. [2] B կարգիդ. [3] B փոխանակ անունութեան. [4] A անուան. [5] B չափեցելոց. [6] A ամոլի. [7] A անձնդ. [8] A չիք. [9] B չիք. [10] A բաղաւա. [11] A իման. [12] A նախադրութիւն անդ ուր. [13] B նախդիր։

Բառդ՝ զաւրէն սեռի. բարդութիւն՝ ի սակաւաբանութեան վերայ[1], իբր թէ վաղտուր, իսկ յորժամ խնդիրն յաւելու, յայս բաղդասեցեր։

Եւ է Հոռոմին ութեւտասն, իսկ մերս՝ անհամար և անբաւ։

Իսկ ստորադասք՝ մի՝ և՛ նախկին, և՛ վերջին՝ քո սակս, սակս քո, իսկ երկու ստորադասքն՝ դրակից[2] և կամ հաղորդ[3]։

Բայց զի՞ սա նախդասեցաւ քան զմակբայն. զի մասն է անուան[4], իսկ մակբայն՝ բայի. զոր աւրինակ ապատոնմ հարուստ. և ապատն թէև աղքատ, վեհագոյն և նախագահ քան զծառայն։

[Ի. ՑԱՂԱԳՍ ՄԱԿԱԲԱՅԻ]

Իսկ անխաղաց, զի ոչ ունի խոնարհումն իբրև զբայ, իսկ ստորաբայ է և կամ ի վերայ, որպէս[5] զայս շինեմ և շինեմ զայս։

Պարզ, ի նմին դրոյդ յայտ է և ջոկադիր. մին՝ վաղ, նախ[6] և միւսն՝ վաղվաղ, նախավաղ։

[1] Եւ ամանակի յայտնիչ է՝ այժմ՝ ներկայի[7], յայնժամ՝ զանցելոյն, դարձեալ՝ զապառնոյն. և զդոսա իբրև զսեռս, իսկ զսերկն և զվաղիւն՝ իբրև զտեսակս։

[2] Զբարիոքն և զյատկապէսն ասել արականին և իգականին հանգետ, զի միջին են։

[3] Եւ մուրցացի և ծղացի և աբացի են յայտ, իսկ ողկուզաւրէն և տարմաբար քերդեալ ի Հոմերոնէ, իբր թէ խիտ և տարմաբար զաւր հանդիսանայր ի պատերազմի ուրեմն։

[6] Կալք երեք՝ ի տան, ի տանէ դուրս և անդուստ[8] ի ներքս։

[31] Ապերդմնական՝ յասելն ուրուք քաւ, թէ չիք արարեալ։

Դրութիւն ծայրիցն և սեռին չարի միայն երկրայելոյն[9] և միջակի և մոլութեան բաղում այլանդակ բանից մի ինչ յանկարծակի և զլինելոյն ճառեացէ իրս։

[Իա. ՑԱՂԱԳՍ ՇԱՂԿԱՊԻ]

Շաղկապդ զի՞ ի վերջէ ասացաւ. գիտելի է, զի ոչ ամենայն վերջին լաւ և ոչ բնաւ անարդ, վասնզի թէպէտ կառավարն ի վերջէ մտեալ ըստ հարկաւոր պահանջման տեղւոյն, այն առաւել պատուական. իսկ սա ոչ ըստ պատուոյ, քան եթէ պիտոյից. աւրինակ իմն՝ յորժամ նիւթ ինչ ի միջի կայ, այնժամ պիտի և[10] կապ, և սա նոյնպէս բայի[11] և անուան և այլոց կապ և յաւդ և յարմարութիւն լեալ[12]։

Իսկ շաղկապ ասի ի շաղելոյ իմն և կապելոյ զբառ ընդ բառ և զմիտս ընդ միտս, որպէս զի զմեկնութիւն բանին յայտնեսցէ։ Եւ մեկնութիւն՝

Տարբերցվածներ. — [1] B չիք. [2] A դրակիցք. [3] A համահաղորդ (փխն. կամ հաղորդ). [4] A բանի. [5] A չիք. [6] A վախճան. [7] A ներկաիւ. [8] B անտուստի. [9] A երկրայելիոյն. [10] B չիք. [11] A բարի. [12] B սրանից հետո տեքստն ընդմիջված է հետևյալ հատվածով, որը յուսանցքում նշված է «յայլմէ» բառով. «Քիլ՝ վեցերորդ մասն է կա[ն]գնի, զի կանգուն վեցքեան է։ Միտք է յարմարացոյց զանազանելոց իմանալեաց. և յառաջքերական բանն նոյնպէս և միաւորեցուցիչ զանազանողաց իմանալեաց տաղից ի փաղառութիւնս և փաղառութեանց ի բառս և ի բառից բաղմաց ի շարադրութեան և երկայն ասացուածս. և անհնն հեղեալ ունի միտք երկայնութիւն եթի (?) և երկայնի առ ամենայն իմանալիսն, և բայ երկանանա (sic) և լայնանա ըստ արտաքնացական ճառից»։

ոչ կարեւոր ինչ քննող լուծմանց, այլ սովորական խաւսից բառ[1]։ Բառդ՝ զաւրէն սեռի[2]։

[1] Արդ հանդամանք շաղկապիս ի՝ ջոկամանին[3] անհուն՝ երկուք աւրինակաւք, զի ի սկզբանէ աշխարհիս լեալ որս մինչև ցայժմ ի մէջ առնուցուս պատմելով և կամ ի քէն մտածութիւն խորին։ Եւ է ջոկամանն իբր և զմիաբանութիւն իմն գիմաց և առաջարկեալ գիմացն առ իրեարս ըստ ցուցելում աւրինակիդ և ասի եւ, զի[4], իբր թէ՝ «ես և դուք»։

[2] Իսկ անջատականն ընդդէմ ամին զմիտս իրին՝ ոչ բաժանելով, այլ զդէմսն միայն որոշելով, եթէ՝ «կամ առնեմ, կամ՝ արա»[5]։

[3] Բաղմատդ[6] է, որ ոչ ի նմին հաւասի ճանապարհի[7], այլ ճանապարհաւն՝ ըստ առակի սերմանն, որ վերարերի ի հերձածողսն. և գիտելի է զնա, թէ՝ «յորժամ ծածկի յամպ յարեգակն», զգոյութիւնն ոչ նշանակէ, բայց զկարգն։

[4] Իսկ ապրբաղմատն, որ զոճն և զգոյացութիւնն յայտ առնէ՝ «Վասնզի՝ ուրախարարն պարտ է ուրախ առնել»։

[5] Փաստաբանական է իբր զճանապարհորդին յամեցելոյ զպատճառն քննիցէ ոք՝ «Է՞ր ազագաւ յամեցեր»[8]։

[6] Որոյ[9] ընդդէմ տարակուսականն, զի անդ ի հարցմանէն պատճառն յայտնեցաւ, իսկ ասա յանյայտէն՝ միայն տարակոյսն[10]։

[7] Բաղբանական[11] է բազում բաղեալ բանս և ի վեր եկեալ առակաւք և հաստատութեամբ, զոր գիւրագոյն և զարմանալով ասել՝ «ուրեմն այս էին երազքն Յովսեփու»[12]։ Բայց և հնարաւոր է[13] միում անուան երկուս կոչմունս ընդունել, որպէս և մարդ առհասարակ[14] ասի. զարձեալ տիրական կարէ ասել մարդ[15], սոյնպէս[16] ուրեմնդ է քաջալերելի և տարակուսելի։

[8] Թարմատար ոչ իբր և հարկաւոր որպէս[17] զայլսդ, այլ աւրինակ իմն գոյն նկար ի հանդերձի վասն փոքր ինչ զարդու, նմանապէս և սա մասամբ դչափ տաղին ընլով և կամ զմիտս ինչ պայծառացուցանելով։

[9] Բայց ընդդիմանակոդ զոմանս ասել[18] սովորութիւն է իմաստնոց զհաստատունսն ինքեանց անուամբ ասել, իսկ զերկրայելիսն, ուստի[19] եպերանք ինչ գայցեն այլոց բանիւ և ընդդիմական՝ «Թէպէտ արագ էր, սակայն հասի, թէպէտ[20] զաւրաւոր, յաղթեցի»։

[10] Վարանական է, զի յորժամ յառաջնոյն ոք վրիպէ, առ հարկի ընդունի զերկրորդն, որպիսի թէ՝ «Յայնչափ յաշխոյժ վաստակոց ոչ բաւականանամ և այլոց գոնեայ և ոչ ձի ի դարմանել և դատարկարար կերակրիլն լեալ»։

[ԻԲ. ՅԱՂԱԳՍ ԱՌՈԳԱՆՈՒԹԵԱՆ]

Առոգանութիւն առասացութիւն[21] ասի. և սեռականք չորք վասն այսորիկ ասի, զի յառաջիկայս բաժանին ոլորակն ի շեշտ և ի բութ և

Տարբերեցվածներ. — [1] B չիք. [2] A սեռից. [3] B ի ջոկամանակիս. [4] A երգի. [5] B արա. [6] A բաղաւոդ. [7] A ճանապարհորդի. [8] B յամեցար. [9] A որ. [10] B տարակոյսն է յինքեան. [11] B բաղբանակ. [12] A այս են պատերազմքն Յուսեփու. [13] B հնարաւոր. [14] A առհասարակական. [15] B սեռական կարէ ասել մարդոյ. [16] A որպէս. [17] A հարկաւորապես. [18] B ընդդիմանակիս գայլս ասէ գնողս. [19] A և ուստի. [20] B թէպէտ և. [21] A առոգասացութիւն։

[ի] պարոյկ, ամանակն՝ յերկար և ի սուղ, հագագն՝ ի թաւ և ի սոսկ, և կիրք՝ յենթամնայն, յապաթարց և ի սոսրատ։ Ենթամնայն[1] է որպէս[2] ասէնուսոյց. ապաթարցն[3] զի ի բաց բարձցի այրն, դնելով զնա, ասի ապաթարց։

[Իգ. ՅԱՂԱԳՍ ՈՏԻՑ]

Ոտք ասին, վասնզի որպէս բնութիւն կենդանեաց ի վերայ ոտից հաստատագոյն[4], այսպէս[5] և քերդութիւն ամբողջ և հաստատուն կատարի այսոքիւք ոտիւք, որ չափք անուանին[6] և են միմեանց դիմադրութեամբ. և պարզք, զի ամմամբ լինին շարադրեալք։

Տարբերվածներ — [1] A ենթամնականն է. [2] A չիք. [3] A ապթարցն. [4] B հաստատանագոյն. [5] A ապէս. [6] A որ չափք անուանին՝ չիք։